

« ԿՈԹՈՂԱՅԻՆ » ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ

Գրախոսություն

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից տպագրված
«Հայոց պատմություն» բազմահատորյակի երրորդ
հատորի առաջին և երկրորդ գրքերի վերաբերյալ

«ԿՈՐԹՈՂԱՅԻՆ» ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ ՏՊԱԳՐՎԱԾ
«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԲԱԶՄԱՀԱՏՈՐՅԱԿԻ
ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԳՐՔԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Երևան 2016

ՀԱՅՈՑ

ՀՏԴ 94 (479.25)
ԳՄԴ 63.3 (5Հ)
Կ-637

Տպագրվում է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի
գիտխորհրդի երաշխավորմամբ

Խմբագիր՝ պ. գ. դ. Հայկ Դեմոյան

Կ-637 «Կոթողային» խայտառակություն. գրախոսություն ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից տպագրված Հայոց պատմություն բազմահատորյակի երրորդ հատորի առաջին և երկրորդ գրքերի վերաբերյալ, Երևան: ՀՅԹԻ հր., 2016, 80 էջ:

Սույն աշխատանքը ներկայացնում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակված «Հայոց պատմություն» բազմահատորյակի երրորդ հատորի առաջին ու երկրորդ գրքերի համակողմանի վերլուծությունը՝ վերհանելով այնտեղ տեղ գտած հակագիտական թեզերն ու անլուրջ մոտեցումները հայ ժողովրդի պատմության հիմնահարցերը լուսաբանելիս:

Մասնագիտական խոր գիտելիքների պակասի, բազմալեզու սկզբնաղբյուրների հետ աշխատելու անկարողության պատճառով կոթողային այս աշխատանքում կան աղաղակող անճշտություններ ու բազմաբնույթ թերություններ, որոնք լրջորեն վարկաբեկում են հայագիտությունը և հայ ժողովրդի ազգային նկարագիրն ու պատմական հիշողությունը:

ՀՏԴ 94 (479.25)
ԳՄԴ 63.3 (5Հ)

ISBN 978-9939-822-79-2

© Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2016

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
Սխալներ հղումներում և մատենագիտության ցանկերում	26
Աղբյուրների և սկզբնաղբյուրների տեսություն.....	30
Ընդհանուր ու մասնավոր դիտողություններ	33
Լեզվաոճական և ուղղագրական սխալներ	59
Ամփոփիչ եզրահանգումներ	70
Հավելված.....	74

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդեն մի քանի տարի է, ինչ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը ՀՀ կրթության ու գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի պատվերով և պետական ֆինանսավորմամբ իրականացնում է «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակի հրատարակումը: Առ այսօր լույս է տեսել վերոնշյալ աշխատանքի մի քանի հատոր: Ըստ ներկայացված պաշտոնական տվյալների՝ Գիտության պետական կոմիտեն յուրաքանչյուր հատորի համար ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտին հատկացրել է շուրջ 20 մլն ՀՀ դրամ: Հատորի երկու գրքերում տեղեկություն չկա դրանց տպաքանակի մասին:

Ակադեմիական բազմահատորյակի երրորդ հատորի երկու գրքերի խմբագրակազմում ընդգրկվել են ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը (պատասխանատու խմբագիր), Է. Կոստանդյանը (պատասխանատու խմբագրի տեղակալ), Վ. Բարխուդարյանը, Մ. Զուլալյանը, Ա. Խառատյանը, Հ. Մուրադյանը, Ա. Մարությանը, Ռ. Սահակյանը, Վ. Մելիքյանը:

Ժամանակագրական սկզբունքից շեղված, հաջորդականությունը չպահպանած ու ցաքուցրիվ հրատարակված հատորների թվին վերջերս ավելացավ երկու գրքից բաղկացած երրորդ հատորը, որն ընդգրկում է XVII դարի երկրորդ կեսից մինչև 1918 թվականն ընկած ժամանակահատվածը: Առաջին գիրքը (լույս է տեսել 2010 թ.), ընդգրկելով XVII դարի երկրորդ կեսից մինչև XIX դարի վերջն ընկած ժամանակահատվա-

ծը, չունի որևէ խորագիր կամ վերնագիր, այնինչ 2015-ին լույս տեսած՝ 1901-1918 թվականներին վերաբերող երկրորդ գիրքը վերնագրված է՝ «Գիրք երկրորդ (1901-1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին)» (տե՛ս Հայոց պատմություն, հատոր III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես– 1918 թ.), Գիրք երկրորդ (1901-1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին), Երևան, 2015, 760 էջ +32 էջ ներդիր):

Թե ինչ տրամաբանությամբ է Մեծ եղեռնի, Հայաստանի առաջին հանրապետության պատմության դրվագներն ընդգրկող հատորը ստացել նման վերնագիր, հատորի խմբագրակազմը որևէ բացատրություն չի տալիս:

Ավելորդ չենք համարում նշել, որ երկար ընդմիջումից հետո հայ ժողովրդի ու հայկական պետականության պատմությունը նորովի ներկայացնելուն կոչված այս բազմահատորյակը՝ որպես ակադեմիական հրատարակություն, պետք է դառնար նաև ուղենիշային ու համապարփակ մի աշխատանք՝ խնդրո առարկա ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների, այդ թվում Հայոց ցեղասպանության պատմության հետագա ուսումնասիրությունների, ինչպես նաև միջնակարգ ու բարձրագույն կրթության ոլորտում դասընթացներ մշակելու համար:

Անվիճելի է, որ անկախության քսանհինգ տարվա ընթացքում պատմագիտության ոլորտում Հայաստանի Հանրապետությունում և Սփյուռքում հայ, ինչպես նաև օտարազգի պատմաբան մասնագետների աշխատանքների արդյունքում կուտակված նոր գիտելիքների և պատմության ուսումնասիրության նոր մեթոդների կիրառմամբ նման բազմահատորյակի պատրաստումը ոչ միայն ժամանակի հրամայականն է, այլև թուրք-ադրբեջանական համատեղ ջանքերով իրագործ-

վող պատմական գեղծարարության ու ժխտողականության դեմ հուսալի պատվարի և արժանի հակահարվածի նշանակություն պետք է ունենա: Ավաղ, մեր դատին ներկայացվող խղճուկ, հնամաշ ու ժամանակավրեպ այս հրատարակությունն իր բովանդակությամբ միմիայն ուրախության ու արդարացված հրճվանքի առիթ կարող է ստեղծել Բաքվի ու Անկարայի պատմագետ-գրչակների շրջանում:

Զարմանք ու տարակուսանք է հարուցում այն փաստը, որ նման ծանրակշիռ հրատարակություն պատրաստելիս հիմնականում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատողներից կազմված խմբագրակազմը հատորների նախագծերի ու հայեցակարգերի քննարկման աշխատանքներում չի ներգրավել սփյուռքահայ անվանի պատմաբաններին: Սփյուռքահայ մասնագետները նույնիսկ չեն ներգրավվել ո՛չ հատորների խմբագրակազմում, ո՛չ էլ որևէ գլուխ կամ ենթագլուխ հեղինակելու գործում, բացառությամբ եթովպահայ պատմության բաժնի հեղինակ Բ. Աճեմյանի:

Երրորդ հատորի առաջին գրքի ամփոփագրում կարդում ենք. «... Հարորը շարադրված է հարուստ արխիվային նյութի, հրատարակված փաստաթղթերի և սոկա գիտական գրականության համակողմանի օգտագործմամբ»: Նույնիսկ ոչ մասնագետ պատմաբանը այս երկու գրքերի ընթերցումից հետո կարող է հանգել այն եզրակացության, որ այս պնդումը, մեղմ ասած, խմբագրակազմի ցանկությունն է և բոլորովին չի համապատասխանում իրականությանը:

Հայ ժողովրդի պատմության նոր պարբերացումը ժամանակի անհրաժեշտություն է, առաջին հերթին՝ խորհրդային պարտադրված ժառանգությունից ձերբազատվելու տեսանկյունից: Առաջին գրքի առաջաբանում, հիմնավորելով այս թեզը, խմբագրակազմը մեկ այլ ծայրահեղության մեջ է ընկնում՝ փորձելով արհեստականորեն, շինծու կերպով նոր պատմության շրջա-

փուլը պայմանավորել հայ ազգային-ազատագրական պայքարի սկզբնավորմամբ և այն անգլիական հեղափոխության ու համաշխարհային պատմության նոր ժամանակաշրջանի հետ համապատասխանեցնելով՝ ահա այսպիսի մի ձևակերպմամբ. «... Հարկանշական է, որ այդ փուլն ուղղակիորեն համապատասխանում է համաշխարհային պատմության նոր դարաշրջանին՝ անգլիական հեղափոխության ժամանակաշրջանին» (գիրք I, էջ 3): Այս մեկ պարբերությունից հետո արվում է հետևյալ զավեշտական եզրակացությունը. «Վերոհիշյալ հանգամանքը մի անգամ ևս հաստատում է այն իրողությունը, որ ինչպես հայ, այնպես էլ աշխարհի այլ ժողովուրդների անցած պատմական ուղին շատ ընդհանուր կողմեր ունի, և հայոց քաղաքակրթությունը համաշխարհային քաղաքակրթության անբաժան մասն է» (գիրք I, էջ 4): Սա ոչինչ չատող, հրապարակախոսական ոճով արված հետևություն է. սրա փոխարեն հատորի պատասխանատուները պետք է հանդես գային հիմնավոր տեսական եզրակացություններով, հայ ժողովրդի պատմության այս կամ այն շրջափուլի ժամանակագրական սահմանների հիմնավորումներով, ինչը չի արվել: Հերթապահ ձևակերպումների փոխարեն կոտ հիմնավորումներով պետք է տրվեր նոր պատմության տարբեր ժամանակափուլերի պարբերացման գիտական հիմնավորումները, դրանց հիմքերը, և բոլորովին էլ պարտադիր չէ ազուցել հայոց պատմության ժամանակագրությունը այլ երկրների ու ժողովուրդների պատմության պարբերացմանը:

Գիտական նորույթ համարելով Հայաստանի ժողովրդագրական հարցերի քննությունը՝ կարևորվում է «... ուշ միջնադարում և նոր ժամանակներում Հայաստանում տեղի ունեցած ոչ հայանպասար էթնոկրոնական գործընթացների» (գիրք I, էջ 5) ուսումնասիրությունը: Հեղինակները չեն գիտակցել, որ եզրույթներն ու քառակապակցություններն այնքան էլ գիտական

չեն, ունեն տեղային ազգայնականության և ոչ ակադեմիական երանգներ:

Հաջորդիվ կարդում ենք. «Հայրուկ ենթարածիններ են նվիրված 1890-ական թթ. երկրորդ կեսին արևմտահայության մեջ, ի պատասխան պանիսլամիզմի և պանթեիզմի, սկսված ինքնապաշտպանական մարտերին (Մալաթիա, Վան, Սասուն և այլն), թուրքական կառավարության սանձազերծած հայկական զանգվածային ջարդերին, որոնք զնահապովում են որպես հայոց ցեղասպանության առաջին փուլ» (գիրք I, էջ 6):

Հատորի որևէ հատվածում ընթերցողի համար լուսաբանված չէ թուրքական վարչակարգերի՝ սուլթանական, երիտթուրքական ու քեմալական, կողմից իրականացված՝ Հայկական հարցի վերջնական լուծմանն ուղղված ցեղասպան քաղաքականության փոխկապակցվածությունը պարզաբանող և ապացուցող որևէ տեսական հիմնավորում: Նման պնդումը լոկ ներկայանում է որպես «ցեղասպանություն» եզրույթի օգտագործման չհիմնավորված մի առիթ:

Աշխատանքում չեն անդրադարձել այնպիսի կարևոր հարցերի, ինչպիսիք են, օրինակ, հայ կանանց շրջանում ձևավորված ֆեմինիստական շարժումը, հայ իրականության մեջ օտարերկրյա, հատկապես ամերիկյան բարձրագույն դպրոցների ունեցած դերը, այս կրթօջախների ներգործությունը հայոց մտավոր ու հոգևոր կյանքի զարգացման, մտավորական նոր խավերի ձևավորման վրա: Լիովին զանց է առնվել հայկական մարզական ու մարմնակրթական շարժման հույժ կարևոր երևույթի ներկայացումը ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ կյանքում: Այնինչ ժամանակի առաջադիմական այս շարժումը պարունակում էր նաև խորքային գաղափարախոսական հիմնատարներ, որոնք լավագույնս վկայում են ապագայի տեսլականի և առողջ ու մրցակցող սերունդների դաստիարակությանը կարևորություն տալու մասին: Մարզա-

կան կյանքին անդրադարձ է կատարվում միայն խորհրդային Հայաստանի պատմության բաժնում (հատոր IV):

Կուսակցական ծիրից դուրս չեն պարզաբանվել արևմտահայ ու արևելահայ մտավոր և գաղափարախոսական փոխառնչությունների, գաղափարների ու տեսակետների բախման, ինչպես նաև երկու կողմերում առկա կարծրատիպերի ձևավորման ակունքներն ու դրսևորումները:

Այս հատորի երկու գրքերում «հոկտեմբերյան հեղափոխություն» և «հեղաշրջում» եզրերը գործածված են որպես համարժեքներ, իսկ մեկ այլ տեղ այն օգտագործվել է չակերտներով՝ «հեղափոխություն», այնինչ գիտականության սկզբունքը պահանջում է դրանց հիմնավորում կամ բացատրություն՝ թեկուզև հիմնական շարադրանքի տողատակում:

21-րդ էջում (գիրք I) կարդում ենք. «...այդ ժամանակաշրջանում և հետագայում ևս Թիֆլիսը գրեթե լիովին հայկական քաղաք էր...» Նման պնդումը պետք է հիմնավորել կոնկրետ թվերով, իսկ Թիֆլիսը հայկական քաղաք համարելու փոխարեն կարելի է գոնե օգտագործել «Թիֆլիսը մեծ մասամբ հայաբնակ էր» ձևակերպումը:

Հայ ժողովրդի անցած ուղին ու մշակութային ժառանգությունը ներկայացնելուն և կոթողային ու ամբողջական գիտական աշխատանք դառնալուն կոչված այս հրատարակությունը վերածվել է թվերի ու անունների կույտի՝ խորհրդային շրջանում որդեգրած մարքսիստական կուսակցականացված պատմագրությանը բնորոշ հատկանիշներով: Հայոց ցեղասպանության պատմությունը պետք է ներկայացվեր որպես գործընթաց, որոշումների կայացման հաջորդականություն, այլ ոչ թե հին ու նոր տոմարով գրառված ամսաթվերը չտարբերակելով՝ դեպքերի ու իրադարձությունների չփոխկապակցված մի սարսափելի ու գավառական տեքստ: Եթե սրան հավելենք նաև գրագողության ցցուն օրինակները և առանց հղումների

արտագրություններ պարունակող բազմաթիվ հատվածները, ապա պատկերն առավել ամբողջական կդառնա:

Այս հատորն ավելի շուտ հիշեցնում է հապճեպ ու անորակ կազմված հոդվածների ժողովածու, այլ ոչ թե պատմական երկարատև ուղի անցած ու հարուստ ժառանգություն թողած ժողովրդի անցյալի լուսաբանում ու վավերացում: Հատորի աղբյուրների զգալի մասը հիմնականում անցյալ դարի 50-60-ականներին լույս տեսած գրքեր ու հոդվածներ են, չնչին տոկոս են կազմում օտարալեզու հետազոտություններն ու աղբյուրները, որոնց անվանումները, վերնագրերը, որպես կանոն, սխալ են գրված:

Բազմահատորյակի տարբեր բաժինների, ի մասնավորի՝ Հայոց ցեղասպանության պատմությանը վերաբերող հատվածի (ամփոփված է աշխատանքի քսանմեկերորդ՝ «Հայաստանը և հայ ժողովուրդը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1917 թթ.)» գլխում (գիրք II, էջ 459-542), քննությունը ցույց է տալիս, որ այնտեղ կան փաստական աղաղակող սխալներ և մի շարք ընդհանուր ու մասնավոր թերություններ, և որոնք մեծապես նսեմացնում են այս կարգի հրատարակության գիտական ու կիրառական արժեքը:

Մի փոքր նախապատմություն: 2012 թվականին ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի նիստերից մեկում երկար ու համառ պնդումներից հետո Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին տրամադրեց այս հատորի՝ Մեծ եղեռնի պատմությանը վերաբերող հատվածի ձեռագիր տեքստը՝ գիտխորհրդում քննարկելու համար: Առաջին իսկ ընթերցումից հետո պարզ դարձավ, որ գործ ունենք ոչ թե գիտական մակարդակով կատարված, այլ իմիջիայլոց ու կիսատպոատ իրականացված մի աշխատանքի հետ: Ի դեպ, Մեծ եղեռնի պատմության հատվածը փոխանակ հանձ-

նարարվեր հենց ՀՀ Գիտությունների ակադեմիայի կազմում գտնվող Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտխորհրդին՝ այն կազմելու կամ գոնե նույն գիտխորհրդի մասնակցությամբ խմբագրակազմի հետ համատեղ քննարկում կազմակերպելու համար, հատորները կազմող խմբագրակազմը որոշեց աշխատել ինքնաբավ աշխատառճով և հաշվի չառնել ՀՅԹԻ-ի կարծիքը այս հարցում: Ստացվում է, որ Գիտությունների ակադեմիայի համակարգում կարելի է զանց առնել մեկ այլ գիտական հաստատության կարծիքը և հնարավոր ներդրումը այս կարևոր գործում: Ի նշան բողոքի նման կողմնակալ ու մերժելի գործելաոճի դեմ՝ ՀՅԹԻ տնօրեն Հայկ Դեմոյանը հրաժարվեց երրորդ հատորի խմբագրակազմում ընդգրկվելուց, սակայն Պատմության ինստիտուտի երկու գիտաշխատողների՝ Արմեն Մարությանի ու Ռուբեն Սահակյանի համահեղինակությամբ կազմված՝ Մեծ եղեռնին վերաբերող հատվածի առնչությամբ ՀՅԹԻ գիտխորհրդի կողմից ներկայացվեցին դիտողություններ ու առաջարկություններ՝ 12 կետից բաղկացած:

Հատորի խմբագրակազմը, սակայն, տպագրեց վերոնշյալ հեղինակների կողմից պատրաստված տեքստը՝ տուրք տալով հնաճ և գիտականության առումով քննություն չբռնող խոցելի մոտեցումներին: Նշենք՝ Հայոց ցեղասպանության բաժնին նվիրված հատորի գրականության ցանկում տարօրինակ կերպով չկա որևէ հղում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից հրատարակված շուրջ երկու հարյուր աշխատանքներից որևէ մեկին, ինչը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ մենք գործ ունենք կանխակալ ու միտումնավոր վերաբերմունքի հետ: Չենք կարող բացատել, որ նման գա-

վառամիտ մոտեցումն ուղղորդվել ու վերահսկվել է հատորը կազմող խմբագրակազմի կողմից: Ստացվել է ինչ-որ առումով ներքին՝ հայկական ժխտողականության մարզինալ մի դրսևորում: Փոխարենը համապատասխան գլխի հեղինակները չեն խորշել մի քանի հղում անել «Regnum» տեղեկատվական գործակալության հրատարակախոսական նյութերին կամ գիտականության առումով խիստ խոցելի աղբյուրների:

Պատմական գլխավոր ու երկրորդական իրադարձությունները, ինչպես նաև սկզբնաղբյուրի նշանակություն և երկրորդական նշանակություն ունեցող աղբյուրները տարբերակելու անկարողությունը այս հրատարակության ամենախոցելի կողմերից է:

Ա. Ժամանակագրական ու մեթոդաբանական սխալ մոտեցումներ

Երրորդ հատորի երկրորդ գիրքը, որում ներկայացվում է նաև Մեծ եղեռնի պատմությունը, վերնագրված է «1901-1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը»: Սա աղաղակող սխալ է. հայ ժողովրդի պատմությունը նման կերպ չի կարելի պարբերացնել:

Հայոց ցեղասպանության մասին ներկայացված նյութը կառուցված է ժամանակագրական սկզբունքով (ա. Հայոց ցեղասպանության ծրագրի գործադրման սկիզբը¹, բ. Ջանգվածային բռնագաղթն ու կոտորածները 1915 թ., գ. Հայերի կոտորածները 1916 թ.), ինչը սխալ է: Մեր համոզմամբ՝ շարադրանքը պետք է կառուցվեր ըստ ցեղասպանության ծրագրի գործադրման հիմնական փուլ-ուղղությունների՝ զինվորական ուժի ոչնչացում, մտավորականության ոչնչացում, քաղաքացիա-

¹ Բովանդակությունում (գիրք II, էջ 756) ենթագլխի վերնագիրը փոխվում է. «Հայոց ցեղասպանության ծրագրի գործադրման սկիզբը» դառնում է «Մեծ եղեռնի ծրագրի գործադրման սկիզբը»:

կան հայ բնակչության բռնագաղթ և ոչնչացում, հայերի գույքի բռնագրավում (չգիտես ինչ տրամաբանությամբ այս կարևոր հատվածը ներկայացվում է «Հայերի կոտորածները 1916 թ.» բաժնում), հայկական մշակութային արժեքների կողոպուտ և ոչնչացում (այս կարևոր դրվագները, որոնք հընթացս էին կոտորածներին, կրկին ներկայացվում են «Հայերի կոտորածները 1916 թ.» բաժնում):

Նման սխալ բաժանման հետևանքով ընթերցողը կարող է թյուր տպավորություն ստանալ, թե հայերի գույքի բռնագրավման, հայկական մշակութային արժեքների կողոպուտի և ոչնչացման գործընթացները, որոնք ներկայացվում են «Հայերի կոտորածները 1916 թ.» բաժնում (գիրք II, էջ 488-493), շարունակական չեն եղել, այլ սահմանափակվել են տվյալ ժամանակահատվածով: Նույնը վերաբերում է նաև ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդին հասցված վնասների ու կորուստների մասին տվյալներին, որոնք նույնպես ներկայացված են «Հայերի կոտորածները 1916 թ.» բաժնում:

«Զանգվածային բռնագաղթն ու կոտորածները 1915 թ.» բաժնում բացակայում է Հայոց ցեղասպանության ծրագրի ամենակարևոր բաղադրիչներից մեկի՝ 1915 թ. մայիսի 27-ի «Տեղահանության մասին» օրենքի հիշատակումը: Չի տրվում հայ քաղաքացիական բնակչության բռնագաղթի ընդհանուր բնութագիրը, այլ ներկայացվում են տարբեր շրջաններից հայ բնակչության կոտորածների ցաքուցրիվ դրվագներ ու թվային տվյալներ: Մի շրջանից մյուսին անցնելը ընթերցողին հնարավորություն չի տալիս հասկանալու, թե ինչի մասին է խոսքը. օրինակ՝ Էրզրումում կատարվածը ներկայացվում է Գերմանիայի փոխիյուպատոսի հաղորդած այն տեղեկությամբ, որ քաղաքում ձերբակալություններ են կատարվում, և «...ձերբակալվածները պեւրք է արքուրվեն: Դիվանագետը չի բացատրում նրանց՝ տարագրման ճանապարհին սպանե-

լը» (գիրք II, էջ 485): Ապա անցում է կատարվում Խարբերդին՝ չնշելով, որ խոսքը Խարբերդի մասին է, այլ բավարարվում է միայն Խարբերդում ԱՄՆ հյուպատոս Լեսլի Դեվիսի անունը նշելով: Իսկ դիվանագետի հաղորդած տեղեկությունն էլ խմբագրվում է. «*երկու քաղաք և երկու-երեք փոքր գյուղ*»-ը դառնում է «*երկու քաղաք և երեք գյուղ*» (գիրք II, էջ 485):

Այս բաժնում չափազանց թերի է ներկայացված հայ երեխաների բռնի իսլամացման և թուրքացման գործընթացը: Բացի թոուցիկ մի հիշատակությունից՝ գրեթե խոսք չկա թուրքական որբանոցների մասին: Ներկայացված չեն հայ կանանց և երեխաների նկատմամբ կատարված ոճրագործությունները:

Բաժնի հեղինակները մեկ պարբերությամբ անդրադառնում են Հայոց ցեղասպանության գործում Մեծ Բրիտանիայի անուղղակի մեղսակցության հարցին (գիրք II, էջ 489), սակայն գրեթե լռության է մատնված Օսմանյան կայսրության դաշնակից Գերմանիայի ուղղակի և անուղղակի ներգրավվածությունը Մեծ եղեռնի իրականացման գործում, թեմա, որը լայնորեն լուսաբանված ու ներկայացված է աղբյուրներում և գիտական աշխատանքներում: Սա նույնպես պետք է դիտարկել որպես հատորի լրջագույն բացթողումներից մեկը: Հայոց ցեղասպանության գործում Գերմանիայի մեղսակցության հարցին որոշակի անդրադարձ կա միայն «Հայոց ցեղասպանությունը և ինքնապաշտպանական մարտերի միջազգային արձագանքները. իրավաքաղաքական գնահատական» բաժնում: Այսպես՝ երբ խոսվում է ռուս դիվանագետ Անդրեյ Մանդելշտամի արձագանքի մասին, նշվում է, որ նա «*հանցավոր էր համարում նաև կայսերական Գերմանիային, որը թեև չկազմակերպեց ջարդերը, բայց քաջալերեց և արդարացրեց դրանք*» (գիրք II, էջ 517): Գերմանիայի արձագանքի մասին տրված նյութի գրեթե կեսը նվիրված է Կարլ Լիբկնեխտի՝ 1916 թ. Ռայխստագի նիստում ունեցած ելույթին (էջ 518-519): Սակայն այդպես էլ

չի լուսաբանվում, թե ինչում էր Գերմանիան մեղավոր, կամ օսմանյան բանակի գերմանացի սպաների մեղսակցությունը հայերի զանգվածային կոտորածների գործում ինչպես է դրսևորվել: Նույնը կարելի է ասել նաև ռուսական արձագանքի մասին: Այդպես էլ չի տրվում Ռուսական կայսրության քաղաքականության գնահատականը:

Երրորդ հատորի երկրորդ գրքի 4-րդ ենթագլխում («Հայոց ցեղասպանության և ինքնապաշտպանական մարտերի համաշխարհային արձագանքները: Իրավաքաղաքական գնահատականը») «Հայոց ցեղասպանության արձագանք» հասկացությունից պարզապես դուրս է մնացել այն վիթխարի մարդասիրական գործունեության ներկայացումը, որի արդյունքում փրկվեցին տասնյակիազարավոր հայեր. ներկայացված չէ ամերիկյան, եվրոպական և ռուսական մարդասիրական կազմակերպությունների աշխատանքը: Միայն առանձին դեպքերում կան կցկտուր ու թոռուցիկ հիշատակումներ: Ընդամենը մեկ պարբերությամբ ու հանրագիտարանային ոճով է խոսվում Մերձավոր Արևելքի նպաստամատուց կազմակերպության («Near East Relief») հսկայածավալ մարդասիրական գործունեության մասին, որի արդյունքում ստույգ մահից փրկվեցին տասնյակիազարավոր որբեր ու վերապրածներ: Բացակայում է որբանոցների ստեղծման, հայահավաք աշխատանքների, դրանցում ներգրավված անձանց մասին հիշատակումը:

Չի նշվում, թե ի՛նչ քաղաքականություն էին որդեգրել երիտթուրքական իշխանությունները հույն հպատակների հանդեպ մինչև Առաջին աշխարհամարտը, պատերազմի սկզբնական շրջանում և հետագա տարիներին: Հույների նկատմամբ իրականացված քաղաքականությունը, ներկայացվում է հետևյալ նախադասությամբ. «*Զանգվածային կոտորածների՝ ցեղասպանության ենթարկվեցին նաև Պոնտոսի հույները*» (գիրք II, էջ 486): Այսինքն՝ անտեսվում է Փոքր Ասի-

այի տարբեր շրջանների ու Թրակիայի հույների տեղահանություններն ու կոտորածների փաստը: Մյուս կողմից ակնհայտ է, որ «զանգվածային կոտորած» և «ցեղասպանություն» հասկացությունները նույնացվել են:

Երկրորդ գրքի 493-րդ էջում, չշաղկապվելով նախորդ շարադրանքին, նշվում է հետևյալի մասին. «Հայերի, ասորիների և հույների ցեղասպանությունը 1914-1916 թթ. չսահմանափակվեց: Այդ ոճրագործությունը շարունակվեց 1918 և 1920-1923 թվականներին»: Դժվար է հասկանալ՝ երեք ժողովուրդների տեղահանություններն ու կոտորածները մեկ ցեղասպանություն է համարվում, թե՛ երեք առանձին ցեղասպանություններ: Պարզ չէ նաև, թե ինչու է բաց թողնված 1919 թվականը, եթե խոսքը երեք ժողովուրդների կոտորածներին է վերաբերում:

Աշխատանքում հիշատակված շատ ամսաթվերի դեպքում հստակ չէ, թե խոսքը հի՞ն, թե՛ նոր տոմարի մասին է: Իրար հաջորդող նախադասություններում մեկը տրված է նոր տոմարով, մյուսը՝ հին տոմարով, ինչը կարող է կատարյալ շփոթ առաջացնել ընթերցողի մեջ: Այսպես՝ նշվում է, որ 1914թ. հոկտեմբերի 22-ին Էնվերը հրամայեց փոխծովակալ Վ. Սուշունին առանց պատերազմ հայտարարելու հարձակվել և ջրասույզ անել ոռոսական նավերը: Դրանից հետո անմիջապես գետեղված է հետևյալ նախադասությունը. «Հոկտեմբերի 16-17-ին գերմանա-թուրքական ռազմականավերը հրեպակոծեցին Օդեսան, Սևաստոպոլը, Նովոռոսիյսկը և Թեոդոսիան» (գիրք II, էջ 461):



կենտրոն Բաթուն, Բաթուն-Վյադիկավկազ և այլ ռազմավարական ճանապարհներն ու փոխարքայության կենտրոն Թիֆլիսը¹²²¹:

Մարտական գործողությունների սկզբում ռուսներն ունեին 170-200 հազար զինվոր ու սպա, 153 հետևակային գումարտակ, 175 հեծյալ հարյուրյակ, 12 սակրավորական վաշտ, 350 դաշտային հրանոթ և բերդային հրետանու 5 գումարտակ¹²²²: Կովկասյան բանակի զլխավոր հրամանատարն էր Կովկասի փոխարքա կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը: Ետաբի պետը գեներալ Ն. Ն. Յուդենիչն էր:

Էնվերը կազմել էր Կովկասյան բանակի ջախջախման ծրագիր: Այն նախատեսում էր զլխավոր հարվածը հասցնել Էրզրում-Կարս ուղղությամբ, սրբեթաց գրոհով զրավել Արդահանն ու Բաթումը, ապա Մարիդամիչ քաղաքի մոտ շրջապատել և ջախջախել ռուսների հիմնական ուժերը: Դա հնարավորություն կտար հասնելու հակառակորդի նկատմամբ առավելություն և տիրելու ամբողջ Կովկասին:

Գերմանական ռազմական առաքելությունը, մասնավորապես գեներալ Լ. Ֆոն Ջանդերսը, առարկեցին էնվերի ծրագրին, սակայն ի վերջո տեղի տվեց: Գերմանացիների համար կարևորը Թուրքիայի շուտափույթ մասնակցությունն էր պատերազմին, որը կստիպեր ռուսներին ռուս-թուրքական ռազմաճակատում, իսկ բրիտանացիներին՝ Միջագետքում զգալի ուժեր պահել և դրանք չուղարկել Եվրոպա:

1914 թ. հոկտեմբերի 22-ին էնվերը հրամայեց փոխձովակալ Վ. Սուչոնին առանց պատերազմ հայտարարելու հարձակվել ու ջրասույզ անել ռուսական նավերը և ոճբաղծել Սև ծովի առափնյա ռուսական քաղաքները¹²²³: Հոկտեմբերի 16-17-ին գերմանաթուրքական ռազմականվորը հրետակոծեցին Օդեսան, Աևաոոոպոլը, Նովոռոսիսյուը և Թեոդոսիան: Հակառակորդին հաջողվեց ջրասույզ անել ռուսական մի քանի ռազմական և առևտրական նավ ու վնասել ավաներձ մի շարք շինություններ:

Ի պատասխան այդ հարձակման՝ 1914 թ. հոկտեմբերի 20-ին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը: Նոյեմբերի 5-ին Թուրքիային պատերազմ հայտարարեցին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան: Սուլթանական կառավարությունը միայն նոյեմբերի 12-ին պաշտոնապես պատերազմ հայտարարեց Անտանտի երկրներին: Անտանտի տերությունների և Թուրքիայի միջև մարտական գործողություններն ընթացան երեք ռազմականտներով՝ ռուս-թուրքական (Կովկասյան), Միջագետքի և պաղեստինա-սիրիական:

Հոկտեմբերի 20-ին ռուսական զորքերն, անցնելով պետական սահմանը, խորացան հակառակորդի տարածքում: Նախատեսվում էր զլխովին ջախջախել թուրքերին և 1915 թ. գարնանը ավարտել պատերազմը: Մարտական գործողություններն ընթանում էին Սև ծովից մինչև Ուրմիա լիճ՝ 720 կմ երկարությամբ:

Կովկասյան բանակի զլխավոր հարվածային ուժը գեներալ է. Գ. Բերխմանի Մարիդամիչյան ջոկատն էր: Վերջինս զրավեց Ալաշկերտը, Խորասանը և Բայազետը: «Աղբրեջնական ջոկատը»¹²²⁴ գեներալ Ֆ. Գ. Ջեոնոգրոզովի հրամանատարությամբ զգալի հաջողությունների հասավ Հյուսիսային Իրանում՝ Ատրպատականում: Գեներալ է. Գ. Բերխմանի կողմից անուշադրության մատնվեցին տարբեր զորամասերի հրամա-

¹²²¹ Տիս Масловский Е. В., նշվ. աշխ., էջ 31; Шнишов А. В., Кавказский фронт, էջ 579. – Первая мировая война: Пролог XX века, Москва, 1999:

¹²²² Տիս Арзутюнян А. О., նշվ. աշխ., էջ 132-133; Шнишов, նշվ. աշխ., էջ 579; Елисева Ф. И., Казаки на Кавказском фронте 1914-1917. Записки полковника Кубанского казачьего войска в тридцатидесяти брошюрах-тетрадах, Москва, 2001, էջ 9-12; Մարգրյան Ե. Ղ., նշվ. աշխ., էջ 184-185:

¹²²³ Տիս Лорей Г., Операции германо-турецких морских сил о 1914-1918 гг. Перевод с немецкого Е. Шведе, с предисловием Е. Лудри и с примечаниями Н. Новикова, Москва, 1934, էջ 49:

¹²²⁴ Ջոկատը կոչվում էր «Աղբրեջնական» Հյուսիսային Իրանի Ստրպատական անվան աղավաղված ձևից:

Հատորի լրջագույն բացթողումներից է Հայոց եկեղեցու՝ ժամանակի ամենակարևոր ու գերակա հայկական հաստատության պատմության բացակայությունը: Ինչպես կարելի է Հայաստանում սոցիալ-դեմոկրատական ու մարքսիստական գաղափարների տարածմանը հատկացնել առանձին ենթագլուխ և չորս էջ, իսկ հայ եկեղեցու պատմությունը, հաստատության ներսում գաղափարախոսական ու կրոնական բովանդակային վերլուծություններն ուղղակի զանց առնել:

Հատորում վերստին տիրապետող է դարձել հայ ժողովրդի այս կամ այն քաղաքական ու կուսակցական կողմնորոշման և դրա հիմնավորման հարցերը, իսկ ազգային պետականության ստեղծման տեսլականի վերլուծությունը շատ թույլ է ներկայացված: Այնինչ այս առանցքային թեզը կարևոր պետք է դիտվեր ապագա սերունդներին մեր ձեռք բերած պետականության հանդեպ հարգանք ներշնչելու և պատմական հիշողությունը ամրապնդելու տեսանկյունից:

Հատորներում կուսակցական պատմություն և գաղափարախոսության այլընտրանքային ներկայացումներ չկան, իսկ Մեծ եղեռնի տարիներին տեղի ունեցած ինքնապաշտպանական մարտերը ներկայացնելիս կարելի էր գոնե ձեռնպահ մնալ ամեն անգամ այս կամ այն գործչի կուսակցական պատկանելությունը ընդգծելուց:

86-րդ էջում կարդում ենք. «...բազմաթիվ ավագակային որջերի հիմնահարակ ավերումը թույլ տվեց բացել ճանապարհների այն հանգույցները, որոնց վրա հենվելով, հեղափոխում 1918-1920 թթ. հնարավոր եղավ ձևավորել առաջին հանրապետության հայկական դիմագիծը»: Նեղազգայնական ու ռասիստական երանգներ կրող այս ձևակերպումը պարարտ հող է ստեղծում արևմտյան պատմագրության մեջ տիրապետող դարձող այն տեսակետի համար, որի համաձայն՝ Կովկասում և Մերձավոր Արևելքում տեղի էին ունենում փոխադարձ էթ-

նիկ գտումներ, և ցեղասպանությունը լոկ դրվագ է այդ փոխադարձ բախումների: Նման ձևակերպումը հակագիտական լիսեյուց բացի բացարձակապես մերժելի է ու վտանգավոր:

Մեթոդական լրջագույն ու վտանգավոր բացթողումներից է «ցեղասպանություն» եզրույթի հեղինակ նշանավոր իրավաբան Ռաֆայել Լեմկինի և նրա կողմից մշակված «ցեղասպանության» հասկացության տեսական հիմնավորումներն ու հղումները զանց առնելը: Ի վերջո, ամեն առիթով մենք հիշատակում ենք Ռաֆայել Լեմկինին, ով ցեղասպանություն հանցագործությունը հիմնավորելիս որպես դասական օրինակներ ներկայացրել է Օսմանյան կայսրությունում հայերի և նացիստական Գերմանիայում հրեաների զանգվածային բնաջնջման քաղաքականությունը: Հատորներում Ռ. Լեմկինի անունը ոչ մի տեղ չի հիշատակվում:

Մխալներ է պարունակում «Ռազմական գործողությունները ռուս-թուրքական (կովկասյան) ռազմաճակատում» բաժինը: Մասնավորապես՝ չի համապատասխանում իրականությանը հետևյալ պնդումը. *«1917 թ. ... ռուսները հեռացան Բիթլիսից և Մուշից: Օսմանյան Երկրորդ բանակի զորամասերը Մուսթաֆա Բենմալի հրամանատարությամբ 1917 թ. ապրիլի 19-ին առանց մարտի գրավեցին Մուշը»* (գիրք II, էջ 466): Ինչպես հայտնի է, 1917-ին Կովկասյան ճակատում ակտիվ ռազմական գործողություններ չեն ծավալվել: Ռուս-թուրքական ռազմաճակատում վերջին մարտական գործողությունները տեղի են ունեցել 1916 թ. ամառ-աշնանը, այսպես կոչված, Օղնուտի (քնակավայր Բիթլիսի նահանգի Գենջի գավառում) ռազմական օպերացիայի (Огнотская операция) ընթացքում (հուլիսի 23 (օգոստոսի 5) – օգոստոսի 29 (սեպտեմբերի 11): Սկզբնական շրջանում թուրքական Երկրորդ բանակը որոշ հաջողություններ ունեցավ՝ գրավելով Մուշն ու Բիթլիսը, սակայն ռուսները, դիմելով հակահարձակման, կարողացան կանգնեցնել

թուրքերի հարձակումը և 1916 թ. օգոստոսի 2 (15)-ին նորից վերահսկողություն հաստատել Մուշ քաղաքի նկատմամբ:

Մեծ եղեռնի զոհ դարձած հայ մտավորականների թվի մասին նշվում է հետևյալը. «[1915 ապրիլի 24-ին և հաջորդ մի քանի օրերին Կ. Պոլսում]... վաղօրոք կազմված ցուցակների համաձայն՝ ոսրիկանությունը կալանում է 800-ից ավելի, իսկ այլ աղբյուրի համաձայն՝ 2800 հայերի» (գիրք II, էջ 483): 2800-ը իրականությանը չհամապատասխանող թիվ է, և մեկ աղբյուրի վրա հիմնվելով՝ այն նշելը սոսկ հայ ձերբակալվածների թվաքանակը արհեստականորեն ուռճացնելու նպատակով, անընդունելի է և ոչ հարիր ակադեմիական հրատարակությանը: Բացի այդ, 2800 թիվը վերցվել է Արթուր Պեյլերյանի կազմած ֆրանսիական դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուի 26-րդ փաստաթղթից, որտեղ, սակայն, նշվում է, որ ձերբակալված 2800 հայերի մեջ կան բազմաթիվ մտավորականներ («*A la suite de ces événements on aurait arrêté à Constantinople 2800 Arméniens parmi lesquels de nombreux notables*» (լրևն Arthur Beyleryan, *Les grandes puissances, l'Empire ottoman et les Arméniens dans les archives françaises, 1914-1918, Université de Paris I, Panthéon-Sorbonne, 1983, էջ 21*)): Այսինքն՝ տարօրինակ ձևակերպումներով պատրանք է ստեղծվում, թե բոլոր 2800 ձերբակալված հայերը մտավորական են:

Մտավորականներին նվիրված հատվածում նշվում է նաև, որ առաջին ձերբակալությունները տեղի են ունեցել Ջեյթունում, որի մասին հաղորդվել է դեռևս 1914 թ. հոկտեմբերի 16-ին (գիրք II, էջ 482): Սակայն 484-րդ էջում, հիշատակելով «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» ժողովածուն, նշվում է հետևյալը. «Հայ հասարակական, քաղաքական և կրոնական գործիչների ձերբակալությունները տեղում են հիմնականում չորս շաբաթ՝ 1915 թ. ապրիլի 21-ից

մինչև մայիսի 19-ը»: Այստեղ թերևս ակնհայտ է աղբյուրների հետ սխալ աշխատելու իրողությունը:

Խիստ վիճելի է, եթե չասենք բացարձակապես անընդունելի, աշխատանքի հեղինակների հետևյալ հակազիտական պնդումը. «Ցեղասպանության հեղուկներով հայ ժողովուրդը ունեցավ նաև հոգեկան խեղումներ...» (գիրք II, էջ 492): Անհասկանալի է, թե ինչպես կարող է որևէ ժողովուրդ՝ որպես ամբողջություն, դառնալ «հոգեկան խեղումների» կրող, որ մարմինը կամ անհատն է լիազորված մի ողջ ժողովրդի տալու «հոգեկան խեղում» ավտորոշումը: Կոնկրետ ինչպիսի «հոգեկան խեղումներ» և դրանց ինչպիսի դրսևորումներ է ունեցել հայ ժողովուրդը՝ հեղինակները լռում են: Այնինչ մեկ կամ երկու նախադասությամբ կարելի էր գիտական ձևակերպմամբ ներկայացնել հոգեցնցման ու դրա ժառանգականության երևույթը, որը գիտականորեն ապացուցված իրողություն է ցեղասպանություն վերապրած ժողովուրդների մոտ:

Հեղինակներն այսպես են ամփոփել ենթաբաժինը. «Հայ բնակչության ցեղասպանությունը ժողովուրդների դեմ կազմակերպված ամենամեծ հանցագործությունն է, որին զոհ գնաց 1,5 միլիոն մարդ, ու որը խաբազույնս դաբապարտվում է առաջավոր մարդկության կողմից» (գիրք II, էջ 493): Եթե նույնիսկ անտեսենք այս լոզունգային և հրապարակախոսական ոճին հարիր ձևակերպումը, պետք է ընդունենք, որ, իհարկե, մեզ՝ հայերիս համար այն ամենամեծ հանցագործությունն էր, սակայն մարդկությունը տեսել է մարդկային կորուստների, ժամանակի և տարածության առումներով ավելի մեծ ոճիրներ: Սա փաստ է: Միանգամայն անընդունելի է նման հերթապահ ձևակերպմամբ ամփոփել հայ ժողովրդի պատմության այս ժամանակափուլի կարևոր դրվագներից մեկը:

Մեթոդաբանության և տեքստերը անխոցելի ու կոտ գիտականության սկզբունքով կազմելու հրամայականի տեսանկյու-

նից քննություն չեն բռնում համիդյան կոտորածներին անդրադարձող հետևյալ պնդումները. «...*հայկական կոտորածների ծրագիրը սկսվել է նախապատրաստվել 1890 թ. ամռանից*», ապա հաջորդ նախադասության մեջ արվում է գիտականության առումով անընդունելի մի պնդում. «*Այդ ծրագրի ամբողջական տեքստը դեռևս չի հաջողվել հայտնաբերել*»: Հարց է առաջանում՝ որքանով է տեղին օգտագործել մի ծրագրի գոյության մասին ենթադրություն, ապա նաև խոսել ամբողջական տեքստի մասին, որի հատվածների գոյությունը նույնպես որևէ գրավոր փաստաթղթով չի ամրապնդվում (տե՛ս գիրք I, էջ 509): Սա նույնպես խիստ խոցելի ու վտանգավոր թեզ է: Հայերի կոտորածները անվանել հայկական կոտորածներ՝ սխալ է: Դրանք հայերի, բայց թուրքական կոտորածներ էին, այլ կերպ ասած՝ «հայերի դեմ իրագործված թուրքական կոտորածներ»:

Առաջին գրքում ներկայացված չեն Աբդուլ Համիդի և թուրքական իշխանությունների հակաքարոզչական աշխատանքները, հատկապես՝ արտասահմանյան մամուլի հետ, հայերի կոտորածները և դրանց շուրջ տեղի ունեցած իրադարձությունները խեղաթյուրելու և թուրքանապաստ հրապարակումներ ապահովելու նպատակով:

Տեքստերում տեղ են գտել ձևակերպումներ ու արտահայտություններ, որոնք ոչ միայն անհասկանալի ու զավեշտական են, այլև ակադեմիական նման մակարդակի հրատարակությունների համար սկզբունքորեն անընդունելի: Այսպես՝

«*Միմոն Երևանցին չի դասվում հայ ժողովրդի ազատագրական գաղափարախոսության հակառակորդների շարքը*» (գիրք I, էջ 77):

«*Արևմտյան Հայաստանում ազատագրական շարժման կենտրոնը Մուշն էր...*» (գիրք I, էջ 152): Սա ոչնչով չհիմնավորված ու անտեղի ուղձացված միտք է: Ինչ շարժման մասին է

խոսքը, ինչնով էր այն ներագդված և ինչ հետևանքներ թողեց այն. այս հարցադրումները մնում են անպատասխան:

«Պեղումների ընթացքում երևան հանվեց Բագրատունյաց Գագիկ I թագավորի ամբողջական արձանը, ինչպես նաև ձևով Զվարթնոցին նման Գագկաշեն եկեղեցին իր հալածակազծով» (գիրք II, էջ 177): Այստեղ «հատակազծով»-ի փոխարեն ճիշտ տարբերակն է «մանրակերտով»:

«XVIII դ. մշակութային օջախներից առավել մեծ հռչակ ստացավ դեռևս դարասկզբին (1717 թ.) Վենետիկի Ս. Ղազար կղզում Միսիթար Սեբաստացու կողմից հիմնադրված և վերջինիս անունը կրող հոգևոր հաստատությունը» (գիրք I, էջ 308): Այստեղ սխալ ձևակերպված մտքի պատճառով հասկացվում է, թե միաբանությունն է ստեղծվել 1717 թվականին, այնինչ այն ստեղծվել է 1701-ին, իսկ 1717 թ. այն տեղափոխվել և հաստատվել է Սուրբ Ղազար կղզում:

«Արևմտահայությունը պարբիարքարանից պահանջում էր հայ ժողովրդի պաշտպանությունը հանձնել Ռուսաստանին» (գիրք I, էջ 428): Ինչպես էր դա դրսևորվում, և ովքեր էին արտահայտում այդ միտումը: Նման անհիմն ձևակերպման հեղինակը այն չի մանրամասնում:

ՀՅԴ ձևավորումը, ի համեմատություն մյուս կուսակցությունների, ներկայացվում է յուրահատուկ նկարագրով. «... Ոստի կրկնելով հայկական մշակույթին բնորոշ գործառույթները՝ ՀՅԴ-ն դարձավ հայկականության դարավոր ավանդույթներին հավատարիմ այն ուժը, որը նոր ժամանակներում շարունակեց հայոց պարմության հին շրջանից (հելլենիզմ) և միջնադարից (արևելաքրիստոնեական մշակույթ) հայրնի նույն համադրական գործառույթները» (գիրք I, էջ 499): Սա ակնհայտորեն կուսակցական պատմագիտության տարրերով ու անհասկանալի կենսափիլիսոփայությամբ համեմված մտքի գեղումներով լի նախադասություն է:

ՀՅԴ պատմության բաժնում հիշատակվում է «Յուժնիյե նոմերա» և «Մեվերնիյե նոմերա» խմբակները՝ չբացատրելով դրանց անվանումների առաջացման ակունքները (գիրք I, էջ 501):

19-րդ դարավերջի համար Օսմանյան կայսրությունը հորջորջել «անճայրածիր կայսրություն» (գիրք I, էջ 507) այնքան էլ ճիշտ չէ՝ հաշվի առնելով վերջինիս թուլացումն ու տարածքային կորուստները:

«Մուսուլմանական մոլեռանդություն» եզրի փոխարեն (գիրք I, էջ 508) ակադեմիական հրատարակության համար ավելի պատշաճ կլիներ օգտագործել «կրոնական մոլեռանդություն» եզրը:

ՍԻՄԱԼՆԵՐ ՀՂՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՏԵՆՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԵՐՈՒՄ

Հատորի երկու գրքերում առկա են բազմաթիվ անճշտություններ հղումներում և մատենագիտության ցանկերում: Մասնավորապես օտար լեզուներով գրված վերնագրերում թույլ են տրված վրիպակներ և հղումների հաջորդականության խախտումներ (տե՛ս 486-րդ էջում (գիրք II) հղում №1352 և 1353): Նույնիսկ օգտագործված գրականության ցանկում (գիրք II, էջ 736) կիսատ է գրված մեկ ամբողջ գրքի վերնագիր. Վ. Դադրյանի հայտնի աշխատության ռուսերեն թարգմանության վերնագրից («История Армянского геноцида: Этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа») մնացել է միայն առաջին մասը («История Армянского геноцида»): Հատորներում կան այդպիսի բազմաթիվ օրինակներ, հատկապես օտարալեզու գրքերի դեպքում:

Բազմաթիվ սխալներ ու անճշտություններ են սպրդել հատորների մատենագիտական ցանկերում: Շատ տեղերում ուղղակի մեջբերումներին որևէ հղում չի տրվում, ինչը գիտական տեքստի շարադրման սկզբունքների կոպիտ խախտում է: Տողատակերում նշվող շատ աղբյուրներ տեղ չեն գտել մատենագիտական ցանկերում:

Անհասկանալի է, թե ինչու հեղինակները, հիշատակելով և գնահատական տալով Հայոց ցեղասպանության վերաբերյալ համաշխարհային արձագանքներին, հղում են անում միայն 1965-ին հրատարակված Մնացականյանի հոդվածին, Ա. Բախչինյանի գրքերին կամ Մ. Ներսիսյանի ժողովածուին՝

չփորձելով որպես աղբյուր օգտագործել հենց հիշատակվող հեղինակների աշխատությունները կամ գոնե դրանց հայերեն թարգմանությունները (Ռիդ, Ֆրանս, Նանսեն, Բարբի, Թոյնբի, էլ Ղոսեյն և այլք): Նույնը կարելի է ասել ոուսական աղբյուրների վերաբերյալ: Հեղինակները ծանոթ չեն հղման սկզբնաղբյուրներին (Գորկի, Միլյուկով, Վեսելովսկի, Բյուսով), այլ բավարարվել են այլոց կողմից կատարված աշխատանքի վերաշարադրմամբ (Ա. Զաքարյան, Մ. Մուրադյան, Ա. Յավուճյան): Ցանկալի էր, որ նման հեղինակավոր բազմահատորյակում լինեին ուղղակի հղումներ սկզբնաղբյուրին և ոչ թե միջնորդավորված աղբյուրների:

493-րդ էջում (գիրք II), խոսելով առաջավոր մարդկության կողմից ցեղասպանության դատապարտման մասին, ոչ մի հղում չի տրվում ցեղասպանության փաստը ճանաչած երկրներին, գոնե՝ տողատակում:

Հատորի երկու գրքերում մի տեղում «էջը» գրված է հայերեն, իսկ մյուս տեղում տվյալ աղբյուրի լեզվով՝ խախտելով հղումների միօրինակության սկզբունքը: Նման սխալ է թույլ տրված «նույն տեղում» ձևակերպումը օգտագործելիս: Տրված է «նույն տեղում» և «ն.տ.» տարբերակները: Տեքստերի հղումները արված են չափազանց փնթի. օրինակ՝ որոշ տեղերում անգլերեն հղումներից առաջ հանդիպում ենք «տե՛ս», որոշ տեղերում՝ «see» բառերը, թեև անհրաժեշտ էր նույնատիպություն պահպանել: Այս առումով աչքի է զարնում հատկապես 495-րդ էջի 1405-րդ հղումը (գիրք II), որտեղ օտարալեզու երկու աղբյուրների վերնագրերը կրճատ գրված են երկու տարբեր լեզուներով. մի դեպքում՝ «op. cit.», մյուս դեպքում «նշվ. աշխ.»:

Երկու գրքերում բացակայում են ներքին հղումները, ինչը հնարավորություն կտար խուսափելու անհարկի կրկնություններից:

- Էջ 330 և 740¹ (գիրք II) – Melkonian V., Historical Glimpse of the Armenians in Praq.Basra, 1957. Գրքի վերնագիրը ոչ միայն սխալ է գրված, այլև կիսատ է, քանի որ իրականում պետք է լինի՝ Melkonian V., An Historical Glimpse of the Armenians in Iraq: From the Earliest Times to the Present Day, Basra, 1957.
- Հղումներում չակերտները տարբեր ձևերով են օգտագործված. օրինակ՝ «Асхабад» և “Асхабад”, էջ 352, 354 (գիրք II):
- Էջ 486 (գիրք II) – Հղումներում առկա է սխալ հաջորդականություն: Նույն էջում սխալ է գրված իտալացի դիվանագետ Ջակոմո Գորինիի անունը: Գրված է Կորինի և առանց անվան սկզբնատառի:
- Էջ 739 (գիրք II) – Բ. Էքարտի՝ գերմաներեն գրված գիրքը հայտնվել է անգլերեն սկզբնաղբյուրների ցանկում:
- Էջ 740 (գիրք II) – Issawi Ekonomic history of Iran ճիշտ տարբերակն է Economic:
- Էջ 740 (գիրք II) – Թերի է գրված Ռաֆայել Նոգալեսի գրքերից մեկի անգլերեն անվանումը՝ Nogales R. De, Memoirs of Soldier of Fortune, New York, 1932:
- Էջ 740 (գիրք II) – Թերի է գրված Ֆրեդերիկ Մաքլերի գրքի վերնագիրը:
- Էջ 734 (գիրք II) – Թերի է ներկայացված Յ.Քաջբերունու գրքի վերնագիրը:
- Էջ 741 (գիրք II) – Սխալ հաջորդականությամբ են ներկայացված ֆրանսերեն սկզբնաղբյուրները:
- Երկրորդ գլխի մատենագիտության մեջ իտալերեն աղբյուրները հայտնվել են ֆրանսերենի տեղում և հակառակը:
- Առաջին գրքի մատենագիտական ցանկի հապճեպ պատրաստման հետևանքով թույլ է տրվել սկզբունքային մեկ այլ

սխալ ևս. ըստ լեզուների դասակարգված աղբյուրներում թուրքերեն գրականության մեջ է ներառվել թուրք հեղինակներ Քուրքմանի և Օզջանի՝ անգլերեն լույս տեսած աշխատանքները:

- Ի դեպ, երրորդ հատորի առաջին գրքի սկզբնաղբյուրները միայն հայերեն, ռուսերեն և վրացերեն են հիշատակվում, կարծես հայ ժողովրդի պատմության այդ հատվածի մասին այլ լեզուներով կարևոր սկզբնաղբյուրներ գոյություն չեն ունեցել²:
- Պատկերազարդումների մեջ տեղ չեն գտել առանձին տախտակներ, որոնք կներկայացնեին այդ ժամանակաշրջանի հայկական մշակույթին բնորոշ, յուրօրինակ նյութական մշակույթի նմուշները, ինչպես օրինակ՝ վաղ հայկական տպագրությունները, Կուտինայի հախճապակին, գորգագործությունը, հարսանեկան ոսկե մեղալները և այլն: Ընդհանրապես տեղին կլիներ ներդիրտախտակները համարակալել, իսկ լուսանկարչական նյութին կցել լրացուցիչ տեղեկույթ դրանց բովանդակության վերաբերյալ:
- Երկրորդ գրքի տասնիններորդ գլխում՝ հայ մամուլի պատմության բաժնի չորրորդ ենթագլխում («Գաղթօջախների մամուլը»), Կոստանդնուպոլիսն ու Զմյուռնիան չեն դիտվում որպես գաղթօջախներ, իսկ գաղթավայրերի բաժնում (գլուխ քսաներորդ) Կոստանդնուպոլիսն ու Զմյուռնիան ներկայացված են որպես գաղութներ:

² Չորրորդ հատորի առաջին գրքի մատենագիտական ցանկում տեղ են գտել միայն հայերենով ու ռուսերենով մեջբերված գրականություն, այնինչ բուն տեքստում օգտագործվել են անգլերեն ու ֆրանսերեն աղբյուրներ:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Երրորդ հատորի առաջին գրքի 133-րդ էջում, որտեղ անդրադարձ է կատարվում 1909թ. կիլիկյան կոտորածներին, ակադեմիական տեքստը շարադրված է, այսպես ասած, ազատ ոճով: Անհասկանալի տրամաբանությամբ բուն տեքստի շարադրության մեջ է ներառվել կիլիկյան իրադարձությունների պատմագիտական հետազոտությունների, այդ թվում վերջին հրատարակությունների թվարկումը, այնինչ դա կարելի էր անել տողատակում, թեև բնավ դրա կարիքը չկար՝ հաշվի առնելով բազմահատորյակի տեքստի ընդհանուր կառուցվածքն ու հայեցակարգը: Պետք է ենթադրել, որ այս դեպքում տիրապետող է դարձել հիշատակելու և հիշատակվելու բուռն ցանկությունը՝ դե, իհարկե, հընթացս մոռանալով ՀՅԹԻ հրատարակությունները այս թեմայի վերաբերյալ:

- 489-րդ էջում (գիրք II) նշվում է *«Օսմանսահպարակ հայերի արեղահանության հրամանը արվել էր դեռ 1914թ. հոկտեմբերի 29-ից մինչև նոյեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում: Այս փաստը հայրենի է Ռազմական նախարարության պարմության բաժանմունքի ղեկավար Ազիզ Սամիհը 1935-ին հրատարակած իր հոդվածներում»*: Այստեղ տրվում է բոլորովին անհայտ, ոչ մի հեղինակավոր այլ աղբյուրով չհաստատված տեղեկություն: Նախ հղում է կատարվում Ջոն Կիրակոսյանի «Младотурки перед судом истории» աշխատությանը (1986, էջ 177-178), ապա նաև Քր. Ուոքերի «Armenia: The Survival of a Nation» գրքին (1980, էջ 200):

Քանի որ Ջոն Կիրակոսյանը օգտվել է Ուոքերի գրքից, ուստի մեջբերենք վերջինիս գրքից անգլերեն տեքստը. «*Even before the Sarikamish battle, measures were being taken against Armenians, according to articles in the Turkish newspapers Kurun in 1935, written by Aziz Samih, chief of the historical department of the Ottoman war ministry during the war. Samih showed that orders to attack Armenian villages were received in the east between 29 October and 5 November 1914*». Միթե անգլերեն տեքստից կարելի է եզրակացնել, որ «Օսմանահպատակ հայերի տեղահանության հրամանը տրվել էր դեռ 1914 թ. հոկտեմբերի 29-ից մինչև նոյեմբերի 5-ը ընկած ժամանակահատվածում»: Այսինքն՝ ոչ միայն աղավաղվում է սկզբնաղբյուրի հաղորդած տեղեկությունը³, այլև գերագնահատվում է այդ աղբյուրը:

- Հատորում չի մեջբերվում որևէ աշխատանք ցեղասպանագիտական կարևորագույն գիտական ամսագրերից՝ «Journal of Genocide Research», «Holocaust and Genocide Studies», «Genocide Studies and Prevention», և ընդհանրապես ոչ մի արևմտյան գրախոսվող և հղման քարձր գոր-

³ Ուշագրավ է, որ Քր. Ուոքերն իր հերթին օգտվել է Հայկազն Ղազարյանի հոդվածից, ով հոդվածում մեջբերել է թերթում տպագրվածը. «*October 16 (October 29) till October 23 (Nov. 5) 1914, 4 below-strength division of irregulars, totalling 17,000 reserve cavalry, under the command of Mehmet Fazil, together with a Kurdish regiment of 900 men from Veranshehir Region, were to raid the Armenian villages at night in Erzurum Province. Included were, specifically listed, the villages of Keopriu Keui, Kara Killisse, Diyadin, and Veli-Baba. These raids, according to the long article in Kurun, would include rape of the women and looting of the houses. The Kurds were so uncontrollable that they stole from their army officers and even mistreated some of the Turks*»: Տե՛ս Kazarian Haigazn, “The Turkish Genocide of the Armenians: A Premeditated and Official Assault”, *Armenian Review*, 1977, vol. XXX, no. 1, p. 15. Մեջբերումը մեկ անգամ ևս փաստում է սկզբնաղբյուրի հաղորդած տեղեկության աղավաղումը ակադեմիական հատորում:

ծակից ունեցող պարբերականից. չգիտես ինչու, մի քանի տեղում հղում է կատարվում ժխտողական մի հոդվածի՝ տպագրված Turkish Review (ինչպես տեքստում է, իրականում պետք է լինի Turkish Review Quarterely Digest) ամսագրում:

Պատշաճ գնահատական չի տրվել Հ.Մորգենթաուի հուշագրությանը, որի կարևոր սկզբնաղբյուրային արժեքն այն է, որ դեսպանը մշտական հարաբերություններ է ունեցել երիտթուրքական վերնախավի հետ՝ լինելով հենց որոշումների կայացման ականատեսը, ինչը բացառիկ երևույթ է ցեղասպանությունների պատմության մեջ: Ցեղասպանագիտության մեջ նման անձինք որակվում են հատուկ եզրով՝ critical bystander, այսինքն՝ «կարևորագույն կողմնակի անձ»:

Էջ 514 (գիրք II) – սխալ է նշված Հ.Մորգենթաուի հուշագրության առաջին հրատարակության տարեթիվը. գրված է 1919թ., սակայն այն առաջին անգամ լույս է տեսել 1918 թվականին: ՀՅԹԻԻ կողմից պատրաստված Հենրի Մորգենթաուի հուշագրության արևելահայերեն լիակատար թարգմանությանը հղում չկա: Փոխարենը գերադասել են աղճատ արևմտահայերեն թարգմանության վերատպությունը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒ ՄԱՍՆԱՎՈՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երրորդ հատոր, Ա գիրք

Հայաստանի պատմության նոր և նորագույն շրջանները վիճելի, կուսակցական, կոնյունկտուրային ու գաղափարախոսական առավել ներագրված, խեղաթյուրված ու աղճատված հատվածներից են: Հատորի ներածական մասում կարդում ենք. «Հայաստանի երրորդ հանրապետության սրեղծումը լայն հնարավորություններ բացեց հայ պատմաբանների առջև ճշմարիտ պատմություն շարադրելու, ազգային կուսակցությունների պատմությունն անաչառ լուսաբանելու համար» (գիրք I, էջ 6): Երկու հարցի պարագայում չեն սխալվել, սակայն բուն շարադրանքը դեպքերի ու դեմքերի միապաղաղ շարադրանք-տեքստ է, այն էլ՝ խորհրդային պատմագրությունից ժառանգած՝ կուսակցական պատմություն ներկայացնելու համատեքստով: Միայն այն տարբերությամբ, որ նախկին կոմունիստական կուսակցության փոխարեն զգալի տեղ է տրվել հայ քաղաքական կուսակցությունների գործունեության պատմությանը, պատմական դեպքերը առկախելով կուսակցական պատմություններից: Սա ակնհայտ ու հակազիտական նախատրամադրվածություն է, որը խիստ խոցելի է դարձնում նման մակարդակի աշխատանքը:

«Օրսար տիրապետության դեմ պայքարի կենտրոններ են դառնում հայկական պետականության բազմաթիվ հարկանիշներ կրող Սյունիքի ու Արցախի մելիքություններն ու սղնախները: Դրանց հերազա ամրապնդումը 1720-1740-ական թթ.

հանգեցնում է այդ երկրամասերում որոշակի ժամանակով հայոց պետականության վերականգմանն ու ճանաչմանը» (գիրք I, էջ 4): Նման պնդումները կողմնակալ դատողությունների արդյունք են, և քանի դեռ չի բերվել «պետականության հատկանիշներ» ձևակերպման հստակ բացատրությունը և դրա հիմնավորումը կոնկրետ մեխքությունների պարագայում: Այս տեսակ պնդումը նաև հակագիտական կարելի է համարել, մանավանդ որ նույն տեղում այսպիսի մի պնդում էլ կա: Նման հիմնավորման թերևս միակ փորձն ամփոփված է այս նախադասության մեջ. *«Բանն այն է, որ պետականության հատկանիշերի մի մասի կորուստն ամենևին չի նշանակում դրա լիակատար բացակայություն»* (գիրք I, էջ 4): Ընդհանրապես տեսական գիտելիքների պակասն ու մեթոդաբանական նոր մոտեցումների բացակայությունը առավել ակնառու են դառնում հենց այս ժամանակաշրջանի դեպքերն ու անցքերը ներկայացնելիս ու վերլուծելիս:

- Հատորի 36-րդ և 52-րդ էջերում (գիրք I) թուրքերի կողմից հայկական դրոշների գրավման տեղեկությունը նույնությամբ կրկնվում է :
- Հատորի սկզբնամասում խոսվում է Իրանի և իրանական պետության մասին, այնինչ մյուս մասերում նշվում է «Պարսկաստան» աշխարհագրական անունը, ինչը կոպիտ սխալ է (գիրք I, էջ 62-63):
- 75-րդ էջում (գիրք I) առկա *«Թուրքիան XVIII դ. կեսերին իհիսր ճգնաժամ էր սպրում»* ձևակերպումը ճիշտ չէ: Պետք է նշել Օսմանյան կայսրությունը:
- Տարօրինակ է, հատորի ոչ մի գրքում չի հիշատակվում Ռուսական կայսրության արտգործնախարար Լոբանով-Ռոստովսկու «Հայաստանը մեզ պետք է առանց հայերի» հայտնի արտահայտությունը, այնինչ խորհրդային շրջանում լույս տեսած բազմահատորյակում այս մեջբերումը կա: Հայոց

պատմության սովետական շրջանում լույս տեսած բազմա-
հատորյակի 6-րդ հատորի 284-րդ էջում բառացի գրված է.
«Մենք ուզում ենք Հայաստանը, սուսնց հայերի» (տե՛ս Հայ
ժողովրդի պատմություն, Հատոր VI, Հայաստանը 1870-1917
թվականներին, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981):

- Հատորում չեն պարզաբանվում ու մեկնաբանվում թուր-
քական պետականության, այն է՝ Օսմանյան կայսրության
ցեղասպանական բնույթը և հպատակ ժողովուրդների
հանդեպ գործադրված բռնության մշակույթի ուրույն հատ-
կանիշները:
- Համշենահայերին անդրադառնալիս տեքստում օգտա-
գործված «*հայարար լեռնեցու ինքնությանը հարասրևելու յու-
րահարկություն*» ձևակերպումը խիստ բարձրագույն ու հու-
զական արտահայտություն է, նման հրատարակությանը ոչ
հարիր (գիրք I, էջ 84):
- Բացակայում են օտարերկրյա ճանապարհորդների ուղեգ-
րություններում Հայաստանի և հայ ժողովրդին ազատագ-
րելու ուղիներին վերաբերող անդրադարձները, որոնք կար-
ևոր սկզբնաղբյուրներ են մասնավոր պատմությունների ու
տեղեկատվության տրամադրման առումներով:
- 208-րդ էջում (գիրք I), խոսելով Երևանի սարդարի ռազ-
մուծի մասին, որևէ հղում չկա Սերգեյ Մինասյանի աշխա-
տանքներին, ով անդրադարձել է սարքագների թվում հայ
զինվորների ներկայության հարցին:
- 235-րդ և 195-րդ (գիրք I) էջերում կրկնվում է Ի. Գուդովիչին
պաշտոնանկ անելու և Ալեքսանդր Տորմասովին գլխավոր
հրամանատար նշանակելու տեղեկությունը:
- Անհասկանալի տրամաբանությամբ ռուսական զորքերի
կողմից Ախալցխայի և Ախալքալակի գրավման դրվագնե-
րի մանրամասն նկարագրություններին ավելի շատ էջեր են
տրամադրվել, քան, ասենք, Երևանի բերդի գրավման նկա-

րագրությանը: Դրա ակունքները հասկանալի են: Ուշադիր ընթերցումից պարզորոշ է դառնում, որ հատորի պատասխանատու խմբագիրը՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանը, յուրովի է փորձել տնօրինել ակադեմիական բազմահատորյակի բախտն ու բովանդակությունը՝ իր դոկտորական ատենախոսության բազմաթիվ հատվածներ մեխանիկորեն տեղափոխելով այս հատոր, ինչն անընդունելի է գիտականության տեսանկյունից, մանավանդ որ այդ ատենախոսությունը բազմաթիվ խոցելի կողմեր ունի: Այսպիսով, մանրակրկիտ տեղեկություններ են տրվում Ախալքալակի, Ջավախքի շուրջ տեղի ունեցող իրադարձությունների ու զարգացումների մասին՝ այսկերպ որոշակի անհամաչափություն ստեղծելով Հայաստանի մյուս շրջաններին վերաբերող պատմական դեպքերը նկարագրելիս:

- Բազմաթիվ մասերում տարբեր իրադարձություններ նկարագրելիս կամ փաստեր ներկայացնելիս բացակայում են հղումները, ինչը մեխանիկական վերաշարադրման, այլ կերպ ասած՝ արտագրության տպավորություն է թողնում (օրինակ՝ գիրք I, էջ 250-253):
- Հատորի պատկերագրողումների խառնիճաղանջությունը, հրատարակչական դիզայնի և գրքի ձևավորման պահանջների անտեսումը, ինչպես նաև լուսանկարների համադրման բացակայությունն ու անհամամասնությունները, ի լրումն այս ամենի՝ բոլոր գործիչների ծննդյան ու մահվան թվականների և լուսանկարչական նյութի աղբյուրի բացակայությունը, միջակ կարգավիճակ են տալիս հատորներին՝ որպես հրատարակչական լիարժեք միավորներ:⁴

⁴ Խղճուկ տեսք ունի նաև չորրորդ հատորի առաջին գրքի պատկերագրական նյութը: Կան նաև սխալներ: Այսպես՝ Միհրան Տամատյանի դիմանկարի տակ գրված է Արմեն Գաբո (Փաստրմաճյան): Այդ նույն Արմեն

- 400-401 էջերի (գիրք I) միջև գետնեղված պատկերագարողումների վեցերորդ էջը գրագողության դասական օրինակ է: Կազմողները, օգտվելով Հայկ Դեմոյանի «Հայկական ազգային խորհրդանշաններ» պատկերագարող գրքից, որևէ հղում չեն արել աղբյուրին, իսկ Հասան-Ջալալյաններին վերագրվող զինանշանային հորինվածքը ոչ այլ ինչ է, եթե ոչ մերօրյա վառ երևակայության փնթի մի նմուշ:

Գեղագիտական կողմի կաղալը երևում է երկու բացարձակապես տարբեր բնույթի պատկերագրական նյութերի համադրման այսպիսի փորձով (տե՛ս հաջորդ էջի պատկերը):

Փաստրմաճյանը հիշատակվում է մի դեպքում ԱՄՆ-ում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ, մյուս տեղում՝ դեսպան: Ակնհայտ է, որ սրանք ոչ համարժեք հասկացություններ են:

L'ARMÉNIE

JOURNAL POLITIQUE ET LITTÉRAIRE
PARAISSEMENT EN UN DE CHAQUE MOIS

DEUXIÈME ANNÉE - N° 98
VENDREDI 14 JANVIER 1907
Les numéros de prix les autres
DIRECTION: 10, RUE TOLSTOÏ
Et 20, RUE ...
ABONNEMENTS ORDINAIRE SOUS BANQUE
OU AUTS ÉTRANGÈRES GÉNÉRALES
10 ANS 120 FRANCS - 1 AN 12 - 60 FR.



TOMBÉE DE L'ÉTAT VI DE L'ARMÉNIE
D'après les documents officiels

politiques sont aujourd'hui, et l'on verra que les Arméniens n'ont pas cessé de travailler. Les hommes politiques par la Capitale ne représentent d'ailleurs que l'épave d'un monde qui n'est plus. Les Arméniens n'ont pas cessé de travailler, et l'on verra que les Arméniens ne sont jamais parvenus à faire de leurs malheurs un avantage. Mais le nombre des députés arméniens est si grand et leur influence est telle que l'ensemble des affaires arméniennes est devenu indissociable. En Italie, il n'est point facile pour nous, et surtout pour la diplomatie britannique, d'être les ressources d'un régime démocratique. Les Italiens ont à cet égard le bon sens de l'Arménie et l'ont prouvé en votant la loi sur la liberté de l'enseignement public, et les gouvernements démocratiques ont progressivement en un jour la volonté d'être pour eux-mêmes à une autre sorte de démission de leur mandat. Et c'est ainsi qu'il sera démissionné. Et le démissionnaire.

Une Faveur

Փարիզի «L'Arménie» ամսագրերը



Ասորիարապատի հուշահամալիրը

- Անուշադրության հետևանքով մեծանուն հայ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու նույն դիմանկարը հայտնվել է երրորդ հատորի և՛ առաջին, և՛ երկրորդ գրքում:
- Միքայել Լորիս-Մելիքովի անունը սխալ է ներկայացված առաջին գրքի պատկերագրողումների մեջ: Հայագգի նշանավոր զինվորական ու քաղաքական գործչի դիմանկարի տակ գրված է «Հովհաննես Լորիս-Մելիքով», ինչը սխալ է:
- Երկրորդ գրքում սխալ են Մխիթար Սեբաստացու և Միքայել Չամչյանի դիմանկարների տակ գրված անունները: Նույն տեղում Միքայել Չամչյանի անվան դիմաց հայտնվել է անհասկանալի 081 թիվը:
- Տասնմեկերորդ գլխի առաջին ենթագլուխն ավարտվում է «անգուգական» մի ձևակերպմամբ. *«Դիվանագիտական այդ լարված մթնոլորտում արծածվում և միջազգային հարաբերություններում ծնունդ է առնում Հայկական հարցը՝ սկզբնական շրջանում որպես արևմտահայության ազատագրության հիմնադիր»* (գիրք I, էջ 421):
- Հատորի բազմաթիվ էջերում հիշատակվում է «կովկասյան թաթարների» էթնանվանումը, սակայն ոչ մի տեղ չի լուսաբանվում դրա հիմքերն ու սահմանումները: Ճիշտ կլիներ օգտագործել «կովկասյան թյուրքախոս ցեղեր» ձևակերպումը (տե՛ս գիրք I, էջ 425):
- *«Կարարված սահմուկեցուցիչ կոտորածները, ավարներն ու ավերներն աստիճանաբար հեղաբեկում էին ազգային ժողովի անդամների հոգեբանությունը»* (գիրք I, էջ 428):
- *«Բազմաթիվ զոհերի գնով և սիրագործությունների շնորհիվ պարերազմում հաղթած Ռուսաստանն իրեն միայնակ զգաց»* (գիրք I, էջ 436):
- ՀՅԴ առաջանալու նախադրյալների մասին խոսելիս նշվում է. *«... բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի, եվրոպական սոցիալիստական շարժումների*

ու նամանավանդ ռուսական նարողնիկության հեղափոխական գաղափարների և գործունեության ազդեցությունը արեղծեց այն բարենպաստ մթնոլորտը, որը ՀՅԴ ձևավորման գործընթացը հարստացրեց համամարդկային նոր արժեքներով» (գիրք I, էջ 498): Ի դեպ, այս գրքերում որևէ հղում չկա ՀՅԴ բուստոնյան արխիվներին, չնայած որ արխիվային նյութի հիման վրա անգլերենով արդեն առկա է մի քանի հրատարակություն:

• «Հայության ինքնության գլխավոր օջախներ էին հայոց եկեղեցին, ազգային դպրոցները և մշակութային հասարակությունները, որոնց դեմ էլ ցարական արքունիքը որոշեց ուղղել առաջին հարվածները» (գիրք I, էջ 596):

• 296-րդ էջում (գիրք I) «Հայ ժողովրդի մասնակցությունը 1853-1855 թթ. Ղրիմի պատերազմին» ձևակերպումը որևէ քննություն չի բռնում ոչ միայն քանակական մասնակցության տեսանկյունից, այլև խորհրդահայ հնացած պատմագիտության կլիշեներից է: Ճիշտ կլիներ օգտագործել «Հայերը և Ղրիմի պատերազմը»: Ի դեպ, հաջորդ ռուս-թուրքական պատերազմին անդրադարձող գլուխը վերնագրված է՝ «1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը»: Չի խոսվում հայերի մասնակցության մասին, որն այս դեպքում զգալի է:

• Համիդյան կոտորածների հատվածում աղբյուրագիտության առումով հակադիր պատկեր է ստացվում բուն կոտորածները ներկայացնելիս և դրա միջազգային հետևանքներին վերաբերող ենթագլխի աղբյուրագիտական հիմքերը համեմատելիս:

• Երկու գրքերում չի հիշատակվում ամերիկյան «Կարմիր խաչի» հիմնադիր Կլարա Բարտոնի մարդասիրական առաքելության մասին, որի արդյունքում տպագրվել է առանձին հաշվետվություն, այդ թվում՝ նաև հայերեն թարգմանու-

թյամբ: Ընդհանրապես կարևորություն չի տրվել համիդյան կոտորածներից հետո միջազգային հայասիրական հուժկու շարժմանը, բազմաթիվ օտարալեզու աղբյուրների և ակա-նատեսների վկայություններին, խոսք անգամ չկա շվեյցա-րական հայասիրական շարժման մասին:

- 509-րդ և 544-րդ էջերում (գիրք I) անգլիացի հոգևորական Մալքոլմ Մաքքոլի (Malcolm MacColl) անունը մի տեղում հանդես է գալիս որպես ազգանուն, իսկ մյուս դեպքում որ-պես անուն:
- 538-րդ էջում (գիրք I) կարդում ենք. «1894-1896 թթ. ընթաց-քում կոտորված հայերի թվաքանակը հասավ 300 հազա-րի»: Մի քանի էջ հետո՝ 542-րդ էջում (գիրք I), գրված է. «1895-1896 թթ. կոտորածների զոհերի թվաքանակը վերջ-նականապես ճշտված չէ»: Ի դեպ, այստեղ նշվում է ոչ թե 1894-96 թթ., այլ 1895-96 թթ.:
- 550-րդ էջում (գիրք I) կարդում ենք. «1895 թ. հոկտեմբերի 15-ին Բերդուսայի ճակատամարտում զոհվում է Ջելլաթը», իսկ երկու էջ անց՝ 552-րդ էջում, նույն Ջելլաթի դեկավարու-թյամբ նոյեմբերին զեյթունցիները օգնության են շտապում 16 օր շարունակ մարտնչող Շիվիլիկ գյուղի բնակիչներին:
- Հատորներում ներկայացված չեն ՀՅԴ կովկասյան և արևմտահայ թևերի տարբեր ռազմավարություններն ու հակասությունները:

Երրորդ հատոր, Բ գիրք

Ակադեմիական բազմահատորյակի երրորդ հատորի երկրորդ գիրքը, որտեղ ներկայացված են հայ ժողովրդի պատմության քսաներորդ դարի բախտորոշ ու ճակատագրական դրվագնե-րը, առանձնահատուկ պատասխանատվություն ու գիտական խորքային վերլուծություններ պետք է պահանջեր հատորների խմբագրակազմից՝ հաշվի առնելով քննարկվող ու ներկայաց-

վող թեմաների հրատապությունն ու արդիականությունը մի կողմից, մյուս կողմից՝ Ադրբեջանի ու Թուրքիայի ժխտողականության ու հակահայկական այլատյաց քաղաքականությունը: Առաջին իսկ էջի ընթերցումից, սակայն, պարզ է դառնում, որ խմբագրակազմը ոչ միայն չի ձերբազատվել մարքսիստական պատմագրության չուզունա-պրոլետարիատական կապանքներից, այլև գանց է առել հարյուրավոր սկզբնաղբյուրներ ու արխիվային փաստաթղթեր՝ օգտագործելով երկրորդական ու գիտականորեն քննություն չբռնող աղբյուրներ:

- Գրքի առաջին ենթագլուխն սկսվում է ավանդական ու գլխապտույտ առաջացնող՝ չափ ու կշռի, ծավալային միավորների անտիրապետելի արտահոսքով՝ փութ, դեյաատին, դույլ և այլն, որից հետո պատմության հետ ծանոթանալու ընթերցողի ցանկությունը կտրուկ նվազում է: Ըստ որում կապիտալիստական հարաբերությունների ու պրոլետարական շարժման մասին խոսելիս արժեք գոնե ծանոթանալ վերջին երկու տասնամյակում Ռուսաստանի Դաշնությունում լույս տեսած և այս հարցերը նորովի ներկայացնող սկզբնաղբյուրներին, ոչ թե բավարարվել 1950-60-ականների խորհրդահայ պատմագիտության հնամաշ նմուշներով:
- Հատորի այս գրքի առաջին ցնցող հայտնագործությունը թերևս սա է. *«Արևելյան Հայաստանը կոնյակի ու օղու արտադրությամբ Անդրկովկասում շարունակում էր գրավել առաջին տեղը, իսկ գինու արտադրությամբ զիջում էր Վրաստանին»* (գիրք II, էջ 4): Հարց է ծագում, թե «Վրաստան» և «Արևելյան Հայաստան» աշխարհագրական անվանումների տակ ինչ է հասկացվում, և հետևաբար ինչպես էին չափվում ոգելից խմիչքների արտադրության ծավալները:
- Մեկ այլ տեղում նույն տրամաբանությամբ շարադրված է հետևյալը. *«Ուստի օրինաչափ է, որ Վրաստանում և Բար-*

վում հայ բանվորների թվաքանակն անհամեմատ ավելի մեծ էր, քան Արևելյան Հայաստանում» (գիրք II, էջ 9):

- Խոսելով ազգային և կրոնական թշնամանք հրահրելու ցարական կառավարության քաղաքականության մասին, հեղինակները տալիս են հետևյալ ձևակերպումը. «Անդրկովկասում այդ քաղաքականությունն ուղղվում էր հայերի ու թաթարների դեմ» (գիրք II, էջ 19): Այստեղ ոչ միայն տրված չէ «թաթար» էթնանվանման բացատրությունը, այլև ռուսական կայսերապաշտ քաղաքականության հավասար թիրախներ են ներկայացվում հայերն ու կովկասի թուրքախոս ցեղերը, այնինչ ակնհայտ է, որ այդ քաղաքականությունը ենթադրում էր առավել հետամնաց մահմեդական զանգվածներին հայերի դեմ օգտագործելը, այլ ոչ թե հակառակը: Մեկ այլ տեղում օգտագործված է «հայ և թաթար գրողներ» արտահայտությունը, որը նույնպես անընդունելի է (գիրք II, էջ 21):
- Ցնցող եզրակացության են հանգում, այսպես կոչված, հայ-թաթարական բախումների հատվածը նկարագրելիս. «1905-1906 թթ. արևելահայությունը մարտական դասարարակություն սրացավ»: Ապա նույն էջի տողատակում գրվում է. «Այն իր քննությունը բռնեց նաև հեղափոխում՝ դարավերջին սկսված Ղարաբաղյան ազատամարտի փարիներին» (գիրք II, էջ 21): Նման հակազիտական մտքի տակ գավառական հայրենասիրական պաթոսն է և ոչ ավելի: Հապա ո՞ր մնաց արևմտահայերի մասնակցությունը, ասենք, ռուս-թուրքական պատերազմներին, 1918թ. հերոսամարտերին կամ էլ Հայրենական Մեծ պատերազմին: Արդյոք սա մարտական փորձառություն էր, թե՞ ոչ (եթե հետևենք հատորը պատրաստողների տրամաբանությանը): Հարցադրումն ամենևին էլ հոետորաբանական չէ:

- Խոսելով կաթողիկոսի նախաձեռնությամբ Ռուսական կայսրության տարածքում ապրող հայերի կողմից պատգամավորական ժողով հրավիրելու մասին, հանդիպում ենք հետևյալ ամփոփիչ մտքին. «*Ժողովի հրավիրումը հայոց պետականության արեղծման կարևոր փուլերից էր*» (գիրք II, էջ 22): Ակնհայտ է, որ հեղինակներն այստեղ տալիս են դեպքերի հաջորդականության տրամաբանությանը հակասող միտք, քանի որ նման ժողովը՝ որպես այդպիսին, այդ պահին չէր կարող հանդես գալ որպես հայկական պետականության վերականգնման նախասկիզբ: Պետք է միայն արձանագրվեր, որ այն բախտորոշ նշանակություն ունեցավ հետագա տարիներին տեղի ունեցած իրադարձությունների համատեքստում:
- Հատորի այս գրքում քննական վերլուծության չի ենթարկվում Անդրանիկի ու Նժդեհի գլխավորած հայկական ջոկատների մասնակցությունը Բալկանյան պատերազմներին: Հստակ ներկայացված չեն դրա արդյունքն ու նպատակահարմարությունը, ինչպես նաև թողած դրական կամ բացասական հետևանքները:
- Ադանայի կոտորածների դեպքում «Հոլոքոստ» եզրույթը, որն օգտագործվել Ֆերիման Դաքեթի հեղինակած գրքի վերնագրում, լույս է տեսել ոչ թե Բոստոնում, այլ Լոնդոնում: Հեղինակները խուսափել են գրքի ամբողջական վերնագիրը գրելուց, քանի որ այն վերահրատարակվել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից (գիրք II, էջ 54):
- Ազգային պատմությունը առանձին կուսակցությունների պատմության դրվագներով ներկայացնելու փորձը հանգեցրել է նյութի մատուցման ժամանակագրական վայրիվերումների:

- ՀՅԴ-ի և երիտթուրքերի համագործակցության դրվագները նկարագրելիս որևէ հղում չկա այս հիմնահարցերին անդրադարձած Մերի Քոչարի մենագրությանը: (Мери Кочар, Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос, Ереван, изд-во Ереванского университета, 1988, 307 с.):
- Տեքստում համարյա նույնությամբ՝ մեկ էջ ծավալով, կրկնվում է «Դաշնակցության գործին» վերաբերող անդրադարձը (տե՛ս գիրք II, էջ 30 և 110):
- 127-րդ էջում (գիրք II) Ադանայի կոտորածների դրվագը ներկայացվում է հետևյալ կերպ. «Կոտորածներից միայն երկու ժամ անց տեղի հայությունը հասկացավ, որ նախճիրների կազմակերպիչն իշխող վարչախումբն է»: Սա բացարձակ անլուրջ և ոչ գիտական պնդում է:
- Հատորներում լուսանկարչական նյութն անհամաչափ և անորակ է ներկայացված: Այսպես օրինակ՝ կամավորական շարժման առաջնորդների դեպքում լուսանկարների որակները ուղղակի խայտառակ են: Երկրորդ հատորի 7 ներդիր-տախտակները վերաբերում են կամավորական շարժմանը և միայն երեք տախտակ է նվիրված Մեծ եղեռնի թեմային:
- Ներդիրների առումով կոպիտ սխալ է երկրորդ գլխում 19-20-րդ դարի հայ մշակութային ու քաղաքական գործիչների լուսանկարներից հետո տեղադրել առաջին գլխի՝ 17-18-րդ դդ. հայ մշակույթին վերաբերող պատկերագրական նյութը:
- Նույն տեղում սխալ է ձևակերպված նաև «Բառգիրք Հայկազեան լեզուի» գրքի բացատրագիրը:
- 213-րդ էջում (գիրք II) կարդում ենք. «1884թ. իբրև բերդ հիմնված Ալեքսանդրոպոլը սկսեց կառուցապարվել 1837թ. կազմված գլխավոր հարսկագծով»: Այստեղ ակնհայտ է, որ թվականների տեղերը ճիշտ չեն տեղադրվել:

- Այն, որ գրքի որոշ բաժինների հեղինակները զլացել են տասնամյակներ առաջ պատրաստված նյութի վերանայման հարցում, ակնհայտ է դառնում հետևյալ օրինակներից. «...ճարտարապետ Գ. Տեր-Միքելյանի նախագծով կառուցվեց «Մածեարիկ» (այժմ «Թբիլիսի») հյուրանոցի հինգհարկանի խոշոր շենքը»: Մյուս տեղում. «Ներկայացումները փրվում են «Կովկաս» հյուրանոցի սրահում, հերազայում Ջանիոլադյանի քաղաքային ակումբում (ներկայիս Սպայի փունը): Երրորդ հատորի հրատարակման պահից (2015թ.) առնվազն տասնհինգ տարի առաջ «Թբիլիսի» հյուրանոցը կոչում է «Մարիոթ», իսկ Երևանի սպայի տունը 2002-ին ապամոնտաժվել է, իսկ տեղում կառուցվել է մեկ այլ շենք (տե՛ս գիրք II, էջ 215 և 234):
- Երրորդ հատորում խոսվում է Արևմտյան Հայաստանում և հայաբնակ այլ քաղաքներում լույս տեսած միայն **հայատառ թուրքերեն** մամուլի մասին, տրվում են դրանց բոլորի անվանումները, սակայն շուրջ հիսուն հայալեզու մամուլի և ոչ մի անուն չի հիշատակվում: Այնինչ այդ պարբերականները հայ մամուլի պատմության կարևորագույն մասն են:
- Հատորի ոչ ճիշտ ժամանակագրական ու թեմատիկ բաժանման հետևանքով բազմաթիվ տեղերում մի քանի պարբերություն կրկնվում է. այսպես՝ հայ մամուլի բաժնում Ջմյունիայում լույս տեսած պարբերականներին վերաբերող տեղեկությունը կրկնվում է գաղթօջախների «Ջմյունիա» բաժնում (էջ գիրք II, էջ 285 և 316):
- 289-րդ էջում (գիրք II) սխալ է ներկայացված «Հայ մարմնակրթական ընդհանուր միության»՝ ՀՄԸՄ-ի անվանումը: Այն ներկայացված է որպես «Հայ մարզական ընդհանուր միություն»:
- 298-րդ և 447-րդ էջերում (գիրք II) ԱՄՆ մի շարք պարբերականներում աշխատանքի անցած հայ լրագրող Խաչատուր

Օսկանյանի ազգանունը հանդիպում ենք «Օսկանյան» և «Ոսկանյան» տարբերակներով:

- էջ 310 (գիրք II) – *«Զմյուռնիայի հայություն 1916թ. սկզբներին միայն երիտթուրքերը որոշեցին ձեռնափ լինել Կ. Պոլսի և Զմյուռնիայի (որի հայ բնակչությունը նախապես մասնակիորեն տեղահանվել էր 1915 թ. նոյեմբերին և սալա 1916թ. հոկտեմբերին) հայությանը արտրելու և ոչնչացնելու միադրությունից»*: Սա խիստ անորոշ ու Մեծ եղեռնի այս կարևոր դրվագի հանգամանքները չբացահայտող ձևակերպում է:

Տարակուսելի է, թե ինչու հատորի խմբագրակազմը տեղին է համարել ժամ առ ժամ, գյուղ առ գյուղ ներկայացնել ֆիդայական կոիվները, որոնց մեծ մասը տեղային նշանակություն է ունեցել և ոչ մի ազդեցություն չի թողել կարևոր իրադարձությունների վրա, բայց, ասենք, շատ կարևոր մի իրադարձության՝ 1912թ. հայ գրերի գյուտի և տպագրության համահայկական հորելյանների մասին որևէ հիշատակում չկա: Այնինչ Առաքելոց վանքի կոիվը ներկայացված է 3,5 էջի սահմաններում:

Հակառակ դրան՝ շուրջ 150 հազար հայ որբերի ու վերապրածների կյանքը փրկած Մերձավոր Արևելքի նպաստամատուցի ամերիկյան կոմիտեի վիթխարի մարդասիրական գործունեությանը ընդամենը մեկ պարբերություն է հատկացվել: Հսկայական նյութական ու դրամական միջոցների հավաքագրման, Սիրիայում, Լիբանանում, Երուսաղեմում, Խորհրդային Հայաստանում, Կիպրոսում ու Հունաստանում ստեղծված տասնյակ որբանոցների մասին՝ ոչ մի հիշատակում: Հատորում չկան Էմմա Քուշմանի, Լավջոյի, Բողիլ Բյոռնի, Ենի Եսսենի, Սառա Քորնիսգի և այլոց անունները, ովքեր

հարյուրավոր, եթե չասենք հազարավոր հայերի կյանքեր են փրկել:

Ոչ մի տողով անգամ չի հիշատակվում Ավրորա Մարդիգայանի և «Հոգիների աճուրդ» ֆիլմի մասին, որի ցուցադրությունները համաշխարհային ընդգրկունություն ընդունելուց և որբերի համար հսկայական միջոցներ ապահովելուց զատ միջազգային հանրության շրջանում Հայոց ցեղասպանության մասին ահազանգող լայնածավալ իրազեկման առիթ դարձավ:

Էջ 366 (գիրք II) – Խոսելով Ռուսաստանի, ի մասնավորի՝ Աստրախանի հայ գաղութի մասին, չի հիշատակվում, որ 1717 թվականին այստեղ հայկական թեմ է ստեղծվել:

Էջ 412 (գիրք II) – «...կովկասյան թաթարների «ազգային» խորհուրդը երիտթուրքերի աջակցությամբ մայիսի 28-ին Թիֆլիսում հռչակեց արհեստածին նոր «պետության» ստեղծումը»: Չորրորդ հատորում «Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության անկախության» հռչակման օրը նշվում է 1918թ. մայիսի 27-ը:

Քսաներկուերորդ գլխում միևնույն իմաստով օգտագործվում է «թաթար», «ադրբեջանցի» և «մահմեդական» բառերը, ինչը կոպիտ սխալ է (տե՛ս գիրք II, էջ 550, 552, 554):

Էջ 542 (գիրք II) – Եզրափակելով Մեծ եղեռնին նվիրված գլուխը՝ առանձին կետերով տրված են հետևյալ ամփոփումները.

ա) «Առաջին աշխարհամարտի տարիներին երիտթուրքական կառավարության կողմից իրականացված հայերի ցեղասպանության և ռուսական բանակի մի շարք նահանջների հետևանքով 1914-1916 թթ. միայն Այսրկովկաս և Հյուսիսային Կովկաս գաղթեցին շուրջ 370 հազար գաղթական»:

բ) Գաղթականության առաջացումը պայրճառեց ոչ միայն նյութական հսկայական կորուստներ, այլև հոգեբանական և բարոյական ծանր հարված հասցրեց արևմտահայությանը:

- գ) Հարյուրամյակների ընթացքում փարբեր կողմերից բզկրված պարմական Հայասրանը հայագրկվեց, իսկ հայ ժողովուրդը գրկվեց իր պարմական հայրենիքից:
- դ) Չնայած բազմահազար գաղթականներ փրկվեցին կոտորածներից, սակայն հայրենիքի կորուստը և գաղթաշխարհի առաջացումը հեյրագայում պարճատ դարճավ փարածաշրջանային «միկրոգենոֆոնդի» մահացմանը:
- ե) Այդուհանդերճ գաղթաշխարհը, ինչպես նախորդ պարերազմների ժամանակ, Առաջին աշխարհամարտի փարիներին ևս նպասրեց Արևելյան Հայասրանում հայ փարրի սրվարացմանը և հայ ժողովրդի հավաքական գոյությանը»:
- զ) «Գաղթականներն իրենց մասնակցութունը բերեցին Արևելյան Հայասրանի սվերված փնսրեսության վերականգնման գործին և, թեկուզ իրենց քանակական առումով, նպասրեցին Հայասրանի առաջին Հանրասվարության կայացմանը:

Նման վերլուծութունները և օգտագործված ճևակերպումներն ու եզրույթները որևէ աղերս չունեն գիտական եզրահանգումների հետ և չեն արտացոլում Մեծ եղեռնի իրական հետևանքներն ու դրանց ծավալները:

Էջ 413 (գիրք II) – Վիճելի է 1918թ. սեպտեմբերին Բաքվի հայության գոհերի թիվը: Խոսվում է ավելի քան 30000 գոհի մասին, այնինչ նույն էջում հղում են տալիս դեպքերի ականատես-հեղինակ Բախշի Իշխանյանին, ըստ որի՝ գոհերի թիվը 9.029 է, իսկ բոլոր գոհերի և մահացածների ընդհանուր թիվը կազմում է 13,207: (տե՛ս Բ. Իշխանեան, Բագուի մեծ սարսափները, Թիֆլիս 1920, էջ 554):

Երկրորդ գրքում պարզաբանված չէ Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության ներքաշման նախադրյալները, գերմանաթուրքական պայմանագրի էու-

թյունը, ինչը շատ կարևոր է՝ բացահայտելու համար երկու երկրների ծավալապաշտական նկրտումները:

Հատորում «եթե»-ների, կարելի է «ենթադրել», «կարելի է պնդել» ձևակերպումներով նախադասությունների ու մտքերի շարադրումն անթույլատրելի է նման մակարդակի գիտական աշխատանքի համար: Օրինակ՝ երկրորդ գլխի 455-րդ էջում (գիրք II) կարդում ենք. *«Եթե հասարակի 1917թ. բոլշևիկյան հեղափոխության շրջանում Պետերբուրգի արգենտինյան դեսպանատան դիվանապետ ու նրա առժամյա պատասխանատու Պեդրո Նավեյյանի հայկական ինքնությունը...»*: Անընդունելի է ակադեմիական նման հրատարակության մեջ այսպիսի ենթադրական ձևակերպումների ներառումը:

Էջ 467 (գիրք II) – Կարդում ենք. *«Հայության ճնշող մեծամասնությունը մասնակցեց կամավորական շարժմանը, որովհետև հուսախար էր եղել երիտթուրքերի խուսրումներից և համոզված էր, որ կամավորները կարող էին պաշտպանել արևմտահայերին կոտորածներից»*: Ակնհայտ է, որ սա կուսակցական պատմագիտության թեզերից է, որն ունի որոշակի նայատակներ:

502-րդ էջում (գիրք II) – գրված է. *«Դանիացի միսիոներուհի Ալմա Յոհանսոնի տեղեկությամբ...»*, իսկ 519-ում (գիրք II) նշված է. *«Շվեդուհի միսիոներուհի...»*: Իրականում Ալմա Յոհանսոնը շվեդուհի էր: Ի դեպ, տեքստում առնվազն չորս տեղում հղում է տրվում Ա. Յոհանսոնի հուշագրությանը, սակայն մոռացվում է մեջբերել տասնյակ ոչ պակաս կարևոր այլ օտար ականատեսների վկայությունները:

Էջ 508 (գիրք II) – Անհասկանալի տրամաբանությամբ տեքստում հայտնվել է ֆրանսիական «Գիշեն» հաժանավի անորակ մի լուսանկար, այն դեպքում, որ հատորի կառուցվածքում՝ որևէ այլ տեղում, լուսանկար գետեղված չէ:

554-րդ էջում (գիրք II) գրված է. *«Կասկածից չէր էր, որ Կով-*

կասի մահմեդական ազգերն ու ցեղերը կրնկնենին թուրքական հաջողությունների ազդեցության փակ»:

«Կովկասի մահմեդական ժողովուրդները» ձևակերպումն ալեվի է նախընտրելի այս պարագայում:

Ներկայացվող իրադարձություններում բացակայում է պատմական իրադարձությունների ու գոյություն ունեցող իրավիճակի համատեքստը: Իսպառ բացակայում է Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակի նկարագրությունը և տրոհվող ու քայքայվող կայսրության ներքին ու արտաքին զարգացումների տրամաբանության ներկայացումը: Մալոնիկյան ժողովների մասին տեղեկություն չի տրվում, սակայն հետո ինչ-որ մի տեղ հիշատակվում են Մալոնիկյան ժողովները՝ առանց պարզաբանելու, թե ինչ էր դա: Սա անտեղյակ ընթերցողի մեջ կարող է տարակուսանք և թյուրըմբռնում առաջացնել:

Խոսելով Առաջին աշխարհամարտում հայերի մասնակցության մասին՝ մի ամբողջ ենթագլուխ է նվիրված ոռուսական բանակին ցուցաբերված հայերի օժանդակությանը, ներկայացված է կամավորական ջոկատների ստեղծումը, սակայն չկա համարժեք տեղեկատվություն օսմանյան բանակում հայերի ներկայացվածության մասին: Սա ստեղծում է հայերի «դավաճանության» վտանգավոր պատկեր և հաստատում թուրքական ու օտարազգի ժխտողական պատմաբանների նմանօրինակ պնդումները: Այնինչ հայերը՝ որպես Օսմանյան կայսրության քաղաքացիներ, ներգրավվեցին զինվորական ծառայության մեջ և խիզախություն դրսևորեցին պատերազմի սկզբնական շրջանում: Կապիտան Սարգիս Թորոսյանի հանրահայտ օրինակը, որի մասին վերջին տարիներին բազմաթիվ հիշատակումներ եղան հայկական ու թուրքական աղբյուրներում, չգիտես ինչու վրիպել է հեղինակների աչքից:

Խոսք չկա նաև Սարիղամիշի ճակատամարտում օսմանյան բանակի շարքերում կռված հայ զինվորիկների մասին, որոնցից մի քանի հազարը գերի ընկան և որպես ռազմագերի արքայ-վեցին Սիբիր:

Կազմված տեքստը գիտականության տեսանկյունից խոցելի լինելուց զատ ակնհայտորեն կրում է խորհրդային ժառանգության հետքը. օրինակ՝ հեղինակը անհասկանալի պատճառներով մի քանի տեղում հիշատակում է Ս.Բուդյոնիի անունը, ով հետագայում կդառնա խորհրդային մարշալ, սակայն Առաջին աշխարհամարտի տարիներին ընդամենը կրտսեր հրամանատար էր: Խորհրդային պատմագրության ժամանակաշրջանում դա հասկանալի կլիներ, անկախ Հայաստանում ոչ:

Ջարմանալի է, որ թեմայի հետ առնչություն ունեցող անձնավորությունը կարող է չիմանալ, որ անգլիացի հայտնի քաղաքական գործիչ, Առաջին աշխարհամարտի տարիներին Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեվիդ Լլոյդ Ջորջի ազգանունը Լլոյդ Ջորջ է, և «Լլոյդ» ոչ թե նրա անձնանուն է, որը Դեվիդ է, այլ ազգանվան մի մասը: Այս պարագայում տեքստում հանդիպում ենք Ջորջ ազգանունով վարչապետի, իսկ տողատակերում Ջորջ ազգանունով (գիրք II, էջ 466) հեղինակի:

Երկրորդ գրքում հիշատակվում է, որ Թեշքիլաթ ջոկատներում բանտերից ազատված հանցագործները մեծամասնություն էին կազմում, ինչը չի համապատասխանում իրականությանը (գիրք II, էջ 479):

Նկարագրելով հայ մտավորականության ձերբակալությունը՝ նշվում է ձերբակալության ավարտի թիվը՝ մայիսի 19-ը: Նախ հասկանալի չէ, որտեղից է վերցված այդ թիվը, և, բացի այդ, ճիշտ չէ ձերբակալությունները այս ժամկետին ավարտված համարելը: Գրիգոր Ջոհրապը, օրինակ, ձերբակալվեց մայիսի 20-ին (գիրք II, էջ 484):

Էջ 483 (գիրք II) – «Նշանավոր երգահան Կոմիտասը, բռնա-

գաղթի ժամանակ ականաւորես լինելով հայութեան դժոխային փրտապանքներին, կորցնում է բանականությունը»:

Նման ձևակերպումը լավագոյնս բանաձևում է այն պնդումը, որ Հայոց ցեղասպանության պատմությունը ներկայացնող հեղինակներն ու խմբագրակազմի պատասխանատուները բացարձակապէս չեն տիրապետում նյութին. Կոմիտասը երբևէ ականատես չի եղել որևէ բռնագաղթի, իսկ նրա հոգեկան հիվանդության զարգացման վերաբերյալ բազմաթիվ հետազոտություններ են լույս տեսել, որոնք հաջողությամբ զանց են առնվել հատորի այս կարևոր հատվածը պատրաստելիս:

488-րդ էջում (գիրք II) կարդում ենք. «*Հայերի ցեղասպանությունը չավարտվեց 1915 թ.: Տեղեկանալով, որ արստրավայրերում ողջ են մնացել հայ փարագիրներ, օսմանյան կառավարության հրամանով սկսվեց նրանց ոչնչացումը*»: Եթե նույնիսկ անտեսենք շարադրանքի ոչ գիտական բնույթը, տարակուսանք է առաջացնում նման փաստաթղթի՝ հրամանի գոյության մատնանշումը: Ինչպէս հայտնի է, երիտթուրք առաջնորդները փորձում էին հնարավորինս քողարկել իրենց գործողությունները, և նշանակում է՝ նման պաշտոնական հրամանի լինելը ոչ միայն հայտնի չէ, այլ ավելի շատ՝ քիչ հավանական:

Բացի այդ, անհասկանալի է, թե ինչու է հեղինակը որոշել այդ տեղեկությունը տեղադրել հենց այդ հատվածում՝ «Հայերի կոտորածները 1916 թ.» ենթագլխում, եթե տեղահանության մասին խոսվում էր նախորդ ենթագլուխներում, մասնավորապէս՝ 484-487 էջերում (գիրք II):

Անհասկանալի է, ինչո՞ւ է արհեստականորեն առանձնացվել «Հայերի կոտորածները 1916 թ.» ենթագլուխը, առավել ևս, որ նույն այս ենթագլխում քննարկվում են թեմաներ, որոնք ժամանակագրական առումով դուրս են նշված թեմայից: Բացի այդ, անհասկանալի է, թե ինչու հենց այդ ենթագլխում են սկսում քննվել Հայոց ցեղասպանության հետևանքները (հայ-

րենագրկում, մարդկային կորուստներ. Մշակութային ժառանգության կորուստ եւ այլն), եթե ցեղասպանությունը դեռ ընթացքի մեջ էր: Այս վաղաժամկետ ամփոփման իմաստն անհասկանալի է:

493-րդ էջում (գիրք II) հանդիպում ենք հետևյալ մտքին. *«Հայերի, ասորիների և հույների ցեղասպանությունը միայն 1914-1916 թթ. չսահմանափակվեց: Այդ ոճրագործությունը շարունակվեց 1918 և 1920 թվականներին»:* Կարելի է ենթադրել, որ 1917 թվականին ցեղասպանության իրականացման մեջ դադար է եղել, ինչն այդպես չէ:

էջ 505 (գիրք II) – *«Դիմադրական մարտերը Մուշ-Սասունում և Շապին Կարահիսարում»* վերնագիրը կրող ենթաբաժնում նույնությամբ հայտնվել է Տրապիզոնի վիլայեթի ինքնապաշտպանական փորձերի մասին հատվածը: Տրապիզոնի ինքնապաշտպանությանը վերաբերող այս նույն պարբերությունը առանց փոփոխության հայտնվել է հաջորդ էջում՝ այս անգամ *«Սուևտիայի հայության հերասամարտը: Ֆընտընճագի և Ուրֆայի գոյամարտերը»* ենթագլխում (տե՛ս գիրք II, էջ 506):

Բաժնում խոսք անգամ չկա Հայոց ցեղասպանության պատմության կարևորագույն դրվագներից մեկի՝ երիտթուրքերի դատավարության մանրամասների մասին (երբ ստեղծվեց, ինչ ընթացք ունեցավ գործունեությունը, ինչ մեղադրանքներ ներկայացվեցին, ու ինչ վճիռներ կայացվեցին, ինչպես նաև՝ ինչ հանգամանքներում ոճրագործները խուսափեցին պատժից): Ընդամենը տրվում է հպանցիկ գնահատական: Այնինչ երիտթուրքերի դատավարությունները կարևոր դրվագներ են հայերի ցեղասպանության մասին որոշումների կայացման մեխանիզմների, ոճրագործների հիերարխիայի ու ցեղասպանության գործընթացի բացահայտման տեսանկյունից:

Միմյանց հաջորդող 624-625 էջերում (գիրք II) կարդում ենք. *«Մարտի 15-ին Հ. Բագրատունին ծանր վիրավորվեց, կորցրեց*

նորքը, ինչը թույլ չտվեց ավարտին հասցնել հնարավոր և լավ կազմակերպված ծրագիրը», ապա մեկ պարբերություն անց. «...գեներալ-մայոր Հակոբ Բագրատունին (մարտի 15-ի մահափորձի հետևանքով անդամահարվում է ձախ ուրքը)»:

528-րդ էջում (գիրք II) կարդում ենք այսպիսի ցնցող մտքերի մի շարադրանք. «Այսպիսով հայերի զանգվածային սպանություններն Օսմանյան կայսրության փարսիքում համարվել են հանցագործություն ինչպես դրա իրագործումից առաջ, այնպես էլ ընթացքում և հետո...»:

Թուրքական տեսակետների ներկայացում

Երրորդ հատորի երկրորդ գրքի 467-րդ էջում հանդիպում ենք այս հատորներում տեղ գտած միզուցե ամենավտանգավոր մտքին. «Հայերի ճշող մեծամասնությունը մասնակցեց կամավորական շարժմանը, որովհետև հուսախաբ էր եղել երիտթուրքերի խոստումներից և համոզված էր, որ կամավորները կարող էին պաշտպանել արևմտահայերին կոտորածներից»:

Այս պնդման վտանգավորությունն այն է, որ այստեղ կրկնվում է թուրքական ժխտողականության գլխավոր թեզերից մեկը, որը հանգում է հետևյալ պնդմանը. «Հայերի ճշող մեծամասնությունը դավաճանեց Օսմանյան կայսրությանը պատերազմի ժամանակ և պատժվեց դրա համար»: Հայկական տեսակետն այս տարիների ընթացքում եղել հայերի մեծ մասի հավատարմությունը Օսմանյան կայսրությանը, կասկածանքից ու հնարավոր կտրուկ քայլերից խուսափելու համար, ինչն ապացուցվում է հեղինակավոր ցեղասպանագետների և պատմաբանների բազմաթիվ հետազոտություններում: Սակայն, չգիտես ինչու, ակադեմիական բազմահատորյակի հեղինակները որոշել են ամրապնդել հենց թուրքական տեսակետը: Այս սարսափելի պնդումը կրկին հայտնվում է տեքստի մեջ, հակառակ նրան, որ 2012 թվականին ՀՅԹԻ-ի կողմից

ներկայացված դիտողություններում նշվում էր նման ձևակերպումներից գերծ մնալու անհրաժեշտությունը:

Նույն գրքի 468-րդ էջում նկարագրվում է արևմտահայերին կամավորական ջոկատներին մասնակից դարձնելու մասին. «...աշխարհագորային սրորաբաժանումներում ընդգրկել քացառապես արևմտահայերին և Թուրքիայի հետ սահմանամերձ շրջաններում բնակվողներին: Այս ընտրությունը քացարկում էր մարտական գործողությունների ապագա թատերաբեմին նրանց քաջարեղյակությամբ»: Նորից շեշտվում է արևմտահայերի ակտիվ մասնակցությունը, ինչը չի համապատասխանում իրականությանը:

115-րդ էջում (գիրք II) տրված է Արամ Մանուկյանի գնահատականը կամավորական շարժմանը: Ա. Մանուկյանը «կորստաբեր էր համարում կամավորական շարժումը, ինչը, նրա կարծիքով, զենք էր լինելու իթթիհապական կառավարության ձեռքին՝ արդարացնելու իր հակահայ ջարդարարական քաղաքականությունը»: Ապա տրվում է հետևություն. «Եվ իրոք, երիտթուրքերն օգտագործեցին նման պարտվակր հայերի ցեղասպանության ծրագիրն իրականացնելու համար»: Հաջորդ միտքը պարունակում է բազմաթիվ հակասություններ ու երկակի մեկնաբանությունների տեղիք է տալիս. «Հերագա դեպքերը ցույց տվեցին, սակայն, որ հայերի ցանկացած կողմնորոշում չէր փրկի արևմտահայությանը մեծ աղեկից: Որովհետև երիտթուրք կառավարողները, առաջնորդվելով պանթյուրքիզմի ու համախալամական կրոնապետական ու ցեղապաշտական ծայրահեղ հեղափոխական գաղափարներով, նախօրոք ծրագրել էին Հայոց ցեղասպանությունը, և այդ րեսանկյունից ամենևին էլ նշանակություն չունեի հարցը, թե ինչպես իրենց կյապեն հայերը: Դա էր պատճառը, որ ՀՅԴ վարած զգուշավոր քաղաքականությունն արևմտահայոց հարցում արդյունք չտվեց և չէր էլ կարող տալ» (գիրք II, էջ 115):

Թե ինչ են ցանկացել ասել հատորի հեղինակները նման ձևակերպմամբ, կարելի է երկակի մեկնաբանել: Համենայն դեպս, ակնհայտ է, որ նման նուրբ հարցերի խորքային վերլուծության փոխարեն, տիրապետող է դարձել հերթապահ ձևակերպմամբ հարցը փակելու նախատրամադրվածությունը:

482-րդ էջ, (գիրք II) «*Լինում էին դեպքեր, երբ որոշ թուրք սպաներ նախազգուշացնում էին հայ զինվորներին՝ խորհուրդ տալով դասալքել և անցնել ոռուների կողմը: Հայերը, սակայն, գիտակցելով, որ հակառակորդի կողմն անցնելը կարող է ողբերգական հետևանքներ ունենալ իրենց հարազատների համար, գերադասում էին մնալ կամ վերադառնալ տուն»:*

Այս ձևակերպումը ոչ միայն նման է հեքիաթասացության, այլև հիմնավորում է թուրքական կողմի՝ հայ զինվորներին դասալքության մեջ մեղադրելու թեզը:

Հատորները այժի են զարնում քարտեզագրական նյութի խառնիճադանջությամբ և պատմական քարտեզների անհարկի ձևափոխումներով: Դրանցում առնվազն չորս տարբեր ոճերի քարտեզներ են գետեղված, ինչը նման մակարդակի ակադեմիական բազմահատորյակի պարագայում անընդունելի է: Երկրորդ գլխի 528-րդ էջից հետո տեղադրված քարտեզագիտական նյութի հետ ծանոթանալիս կրկին բախվում ենք հերթական փնթի աշխատառճին. Գեղամ Բադալյանի և Մարտին Մարտիրոսյանի հեղինակած քարտեզների վերնագրերը գետեղված են չորս տարբեր մասերում, իսկ Հայաստանի ազգային ատլասից վերցված քարտեզների վրայից հատորի խմբագիրները զլացել են հանել Ազգային ատլասի էջաթվերը, որոնք, հաջորդական չլինելով, շփոթմունք են առաջացնում: Մեծ եղեռնին վերաբերող քարտեզը վերնագրված է «Հայկական Մեծ եղեռնը», ինչը ոչ միայն անընդունելի է, այլև չի համապատասխանում հատորի համապատասխան գլխի վերնագրին:

ԼԵՐԿԱՈՃԱԿԱՆ ԵՎ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ

Հայ ժողովրդի պատմության ակադեմիական լիակատար այս հրատարակությունը բոլոր առումներով պարտադիր պետք է իրականացվեր անթերի: Ավաղ, հատորներում տեղ են գտել բազմաթիվ լեզվական անճշտություններ (վիճելի կամ անընդունելի ձևակերպումներ, ուղղագրական ու կետադրական սխալներ), ինչպես նաև անփութության կամ տեխնիկական պատճառներով թույլ տրված վրիպակներ:

Տեխնիկական վրիպակներ

Երրորդ հատորի առաջին գրքում սրբագրական ու տեխնիկական վրիպակներ կան 5, 35, 57, 60, 81, 123, 286, 401, 440, 461, 502, 510, 517, 519, 548, 669-րդ էջերում, այնինչ հատորի երկրորդ գրքում նման վրիպակները համատարած են, նույնիսկ միննույն էջում կարելի է հանդիպել մի քանի այսպիսի վրիպակներ (տե՛ս էջ 7, 14, 21, 32, 38, 53, 59, 60, 63, 135, 137, 140, 142, 167, 169, 173, 184, 193, 217, 220, 223, 232, 238, 268, 278, 317, 330, 340, 345, 358, 371, 374, 392, 395, 399, 401, 410, 415, 419, 435, 438, 460, 466, 482, 483, 491, 492, 494, 522, 523, 536, 542, 634, 645, 717, 720, 724, 736, 737, 739, 743, 749, 556, 587):

Կատարված աշխատանքն աչքի է ընկնում բացառիկ անփութությամբ: Սրբագրական փնթի արված աշխատանքի պատճառով ռուսերեն տեքստերի մեծ մասը վերածվել է հիերոգլիֆների (տե՛ս և 142, 167, 184, 223-րդ էջեր):

Քյամբ, որտեղ ուսանչատակ Հայերն օգտվում են ուսական քաղաքացիութեան բոլոր իրավունքներէց և Հաղորդակից են դարաշրջանի քաղաքակրթութեանն ու մշակութին:

Հայկական Հարցի լուծման իր հիմնավորումներով և Հայրենասերի մտորումներով, Համաուսաստանայան միջնավայրում խնդրի շուրջ Հայանպաստ քարոզչութեան կազմակերպման ուղղութեամբ XX դ. առաջին քսանամյակի Հայ պատմահասարակագիտական մտքի մեջ պատմավոր տեղ ունի Ալեքսան Զիվիեզովը (1875-1952): Լինելով լայն ընդգրկման գիտնական (մինչև Հայկական Հարցով դարաշրջել նա բազմաթիվ աշխատութիւններ էր հրատարակել Արևմտյան Եվրոպայի սոցիալ-տնտեսական կացութեան, միջնադարյան քաղաքներ, Վերածննդի և այլ հիմնախնդիրների վերաբերյալ)՝ նա կարողացավ հեռու մնալ պատահապատութիւններից, չըջնալ հրատապ, այդ թիվում Հայ ժողովրդի ճակատագրի հետ կապված կենսական հարցերը: 1906 թ. Մոսկվայի «ՉԳԳ Ի ՉՏԵ» հրատարակչութիւնը լույս ընծայեց նրա «ԸՐՎԼԿՎ Ձ ԼՏՐԻՌՏ» ճանաչողական նշանակութեան ունեցող գիրքը՝ քաղաքական Հայագիտութեան նրա առաջին հրատարակումը, որը նվիրված էր Հայ ժողովրդի նորդարյան պատմութեանը. ուսու ժողովրդի հետ նրա ունեցած պատմական կապերին: 1911 թ. լույս է տեսնում Ա. Զիվիեզովի «Քուրքահայաստանի ապագան» (ուսուներև) մենագրութիւնը, որը մի Հանգամանակց ակնարկ էր Հայկական Հարցի դիվանագիտութեան պատմութեան մասին: Այդտեղ վառ ու կրակոտ հրատարակախոսի իր միջքը նա ի սպաս զրեց Հայկական Հարցի շուրջ նպաստավոր հասարակական կարծիք մշակելու գործին: Նա 1916 թ. «ԸՐՎԼԿՎ ԻՌՈ ՉարժՎՈՒՄ» շարաթիթիթի հրատարակման կազմակերպչն էր, այնուհետև խորացրելը: Իր մեծ Հեղինակութեամբ նա պարբերականի շուրջն էր Համախմբել ուսու մտավորակնութեան լավագույն ներկայացուցիչներին, որոնք Հանդես էին գալիս Հայ ժողովրդի շահերի պաշտպանութեամբ:

Փետրվարյան հեղափոխութիւններից հետո Ա. Զիվիեզովն այն Համոզումներն ուներ, որ Հայկական Հարցի միակ իրական և հնարավոր լուծումը Արևմտյան Հայաստանի լիակատար ինքնավարութիւնն է: Արևմտահայաստանի ինքնավարութեան ստեղծման և գոյատևման միակ իրական երաշխիքը նա տեսնում էր Ռուսաստանի Հովանավորութեան ներքո և գտնում էր, որ ինքնավար Հայաստանի մանդատը պետք է Հանձնվի Ռուսաստանին: 1917 թ. Հոկտեմբերի 20-ին Ռուսաստանի խորհրդում ունեցած իր՝ ելույթում նա քննդատում է ժամանակավոր կառավարութեանը և նրա արտաքին գործերի նախարարութեան «տարօրինակ տատանումները» Հայկական Հարցում, ինչը նա կապում էր ցարական արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովի՝ «պատշաճ ուղի» չգտնելու հակահայկական քաղաքականութեան հետ⁶⁰: Սակայն Ա. Զիվիեզովի ցանկութիւններն ու ջանքերն ապարդյուն անցան: Պատմութիւնը Հակառակ գնաց Ռուսաստանի Հովանու ներքո ինքնավար Հայաստան ստեղծելու գիտնականի ցանկութիւններին, քանի որ երկրում գնալով խորանում էր քաղաքական ճգնաժամը, բոլշևիկների Հակապատերազմական կարգախոսների, այլևայլ գործոնների ազդեցութեան ներքո կործանվում էր Ռուսաստանի դեմոկրատական Հանրապետութիւնը և մարմին էր առնում պետական մի նոր կարգ՝ խորհրդային իշխանութիւնը, մի իշխանութիւն, որի վարած արտաքին գաղափարականացման քաղաքականութեան մարտավարութիւնն ու ռազմավարութիւնը Հայկական Հարցի լուծման ընթացքը ևս տարան բոլորովին անհասկանալի մի ուղիով, որին չկարողացան հասու լինել և ի շահ ազգի օգտագործել ինչպես բուրժուական, այնպես էլ բոլշևիկյան Հայ նորելուկ քաղաքական միտքը ու դիվանագիտութիւնը: Հոկտեմբերյան «հեղափոխութիւնը» Հայկական Հարցը «Հանեց» Հին փակուղուց և

⁶⁰ Ելույթի տեքստը տպագրված է՝ Энцикл. 20 февраля, 1992 և տեղադրված է՝ <http://www.genocide.ru/lib/kirakosyan-a/articles/djivelegov.htm>

կական Հարցի լուծմանը, սակայն Համաձայնվեց խնդրով զբաղվել միայն Բաղկանյան պատերազմի ավարտից հետո⁶²։

Այդ ժամանակ՝ 1912 թ. դեկտեմբերի սկզբին, իթթթիլաֆականները, երկյուղ կրելով, թե Հայկական Հարցը կարող էր Ռուսաստանի կառավարության կողմից վտանգավոր միջամտության առիթի հանդիսանալ, փորձեցին Համաձայնություն ձեռք բերել Հայերի հետ՝ իրենց կողմից առաջարկելով բարենորոգումներ։ Սակայն այդ քայլը կատարվեց ճիշտ թուրքական ձևով։ Մի շարք թերությունների և անՀամապատասխանությունների հետ մեկտեղ իթթթիլաֆականների բարենորոգումների ծրագիրը չէր ենթադրում եվրոպական Հսկողություն, առանց որի ոչինչ էր նույնիսկ ամենայալ նախագիծը։ Բացի դրանից՝ այն տարածվելու էր միայն 4 և ոչ թե Հայկական բոլոր 6 նահանգներին վրա⁶³։

Իթթթիլաֆականներն այդ նախագիծն առաջ էին քաշել միայն Հայկական բարենորոգումների Հարցը օրակարգից հանելու նպատակով և իրականում ոչինչ չէին պատրաստվում անել արևմտահայերի զրուցյունը գեթ մի փոքր բարելավելու համար։

1912 թ. դեկտեմբերի 24-ին Ամենայն Հայոց կաթողիկոսը կրկին դիմում Հոգե առևաջ կայսրին։ Այս անգամ, արտահայտելով Հայերի մեջ տիրող ընդհանուր սազանալը, կաթողիկոսը խնդրեց, որ Լոնդոնում կայացող դեսպանատնողովում բաղկանյան խնդիրների հետ միասին ըննութան առևմի նաև Հայկական Հարցը՝ Հայկական 6 վիլայիթներում բարենորոգումներ անցկացնելու խնդիրը։ Գևորգ Ե-ն նշում էր. «Եթե Հայերն այս անգամ էլ չըջանցվեն, ապա դա Հայաստարագոր կլինի մի ամբողջ ժողովրդի վերջնական բնաջնջմանը»⁶⁴։

Հայկական Հարցը միջնազգային խորհրդատնողովի առջև դնելու որոշումը կայացվել էր 1912 թ. դեկտեմբերի 21-ի 4. Պոլսի Հայոց ազգային ժողովի դուռնական նիստում, որը նաև պարզեց Հայ կուսակցութունների լիակատար Համերաշխությունը բարենորոգումների Հարցում⁶⁵։

Նոևե 1912 թ. նոյեմբերի 8-ին Գևորգ կաթողիկոսը Լոնդոնում եվրոպայի Հայոց Հոգևոր թեմի առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Յութուշյանին Հրամ նամակում հանձնարարել էր Լոնդոնի Հայ Համայնքին առանց ժամանակ կորցնելու հեռագրերով օգնության դիմումներ Հղել եվրոպական մեծ տերութուններին և ԱՄՆ-ին⁶⁶։ Այդ հանձնարարականին Հաջորդեց կաթողիկոսի նոյեմբերի 10-ի կոնդակը եպիսկոպոս Հայկառնավոր Հասարակական-քաղաքական գործիչ Պողոս Նուբար փաշային եվրոպայում կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ նշանակելու վերաբերյալ⁶⁷։ Պ. Նուբարի նշանակումը կարևորվել ու վավերացվել էր նաև 4. Պոլսի պատրիարքարանի ու սպահնոության հանձնատնողի կողմից⁶⁸։

Պ. Նուբար փաշային հանձնարարվել էր Հուշագիր պատրաստել Լոնդոնի խորհրդատնողովին ներկայացնելու համար։ Հուշագիրը պատրաստվեց Պ. Նուբար փաշային գլխավորութամբ կազմված Ազգային պատվիրակության կողմից, որի անդամներն էին

⁶² Տես ԱՅՈՒՐ, փ. Սովետարիւն, ճ. 3464, ղ. 29:

⁶³ Լափազնի տեղաւոր տնի Տօրնիկ ժիլոմատիչեսկի ժոկումենտոս Քեփորմի Վրմենի, 26 նոյեմբ 1912 ժոկ - 10 մայ 1914 ժոկ (պատիւնիս Քեփորմի Վրմենի), թրիժոշենե կ ժոկ. Յ, Քեթրոքրաժ, 1915, էջ 15-19 իթրաւտերնի բնաւորի և ռուսերնի բարձրնաւոթոնիս)։ Հաշիստաւել միջազգայն ղիվանաւորութայն և սովետական արտաքին քաղաքականութայն փաւսաւորթերնում (1828-1923), կազմեցին Ձ. Ա. Կիրակոսյանը, Ռ. Գ. Սախալյանը, վալ. 20-ի հավելված, երևան, 1972, էջ 164-165. Եւլաչեսե սթրոյտեւո Արմենի Քո տրեթյա Օրանժեւալ կոնգի) (պատիւնիս՝ Օրանժեւալ կոնգի, թրիժոշեյ Քեփորմի Վրմենի (Տրեթյա Օրանժեւալ կոնգի), Քեթրոքրաժ, 1915, էջ 17-19, Լճո, Հաճոց հարցի վաւերաւորիւր, էջ 308-312:

⁶⁴ Генцикл армян в Османской империи. Сборник документов и материалов под ред. М. Г. Меркислизи Ерван, 1983, док. 116, էջ 249:

⁶⁵ Տես ՀԱՄ, ֆ. 57, ց. 5, գ. 55, թ. 3. Օրանժեւալ կոնգի, էջ 14-15:

⁶⁶ Տես ՀԱՄ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 22:

⁶⁷ Տես Եռյկ տեղոլւմ, գ. 55, թ. 12:

⁶⁸ Տես Փափազեան Վ., Հայկական բարենորոգումները (1912-1914). - Վեյն, 1933, Ա, էջ 94:

Այժմ անդրադառնանք ուղղագրական սխալներին:

1. Անձնանունների, տեղանունների ուղղագրության սխալներ
Չգիտես ինչ տրամաբանությամբ ողջ աշխատության մեջ **Կոստանդնուպոլիս** տեղանվան փոխարեն գործածված է միայն **Կ.Պոլիս**¹՝ արևմտահայերենից փոխառված ձևը (Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուում (1956-2006 թթ.) ընդհանրապես հանձնարարված չէ «Կ.Պոլիս» գրության ձևը):

Սանկտ Պետերբուրգ տեղանունը գործածված է միայն **Ս.Պետերբուրգ** ձևով, այնպես, ինչպես՝ «Ս.Աստվածածին եկեղեցի»: Միայն են ներկայացված Օսմանյան կայսրության մի շարք տեղանուններ: Այսպես.

- Բյութանիա – (էջ 63) — Բութանիա
- Քյութահիա – (էջ 64) — Ք(յ)ոթահիա, նախընտրելի է՝ Կուտինա
- Նիկոմեդիա – (էջ 63), հաջորդ էջում՝ Նիկոմիդիա – (էջ 64) — Նիկոմիդիա
- Շաբին Կարահիսար (էջ 60) — Շապին-Գարահիսար

Երկրորդ գրքում՝ ենթավերնագրում գրված է՝ «Շապին Կարահիսարում», իսկ բուն տեքստում՝ շապինգարահիսարցիներ (տե՛ս էջ 501 և 505)

- Աֆիոն Կարահիսար (էջ 64) — Աֆիոն-Գարահիսար
- Ադրիանուպոլիս (էջ 37) — Ադրիանապոլիս
- Հաճըն (էջ 130, 120) — Հաճն, հաճնեցի
- Հալիպոլ (էջ 37) — Գալիպոլի
- Ելիսավետապոլ (էջ 29) — Ելիզավետապոլ
- Դյորթ-յոլ (էջ 130), մեկ այլ տեղում՝ Դյորթ-Յոլ
- Թոխատ (էջ 300, 313) — Թոքատ
- Սևերակ – Սևերեկ (էջ 53)
- Տամալճըզ (էջ 507) – Տամլաճըզ (Տամլաճիզ)

- 55-րդ էջում (գիրք II) սխալ է գրված Բրյուսել քաղաքի անվանումը: Ֆրանսերենում պետք է լինի Bruxelles, Bruxxeles-ի փոխարեն:
- Օգտագործվել է և՛ «Ռուսական կայսրություն», և՛ «Ռուսաստանյան կայսրություն» ձևերը:
- Ալեքսանդրոպոլ (էջ 213) – Ալեքսանդրապոլ
- Հայաստանյայց (յայց) եկեղեցի (էջ 12 և 456)– Հայ առաքելական եկեղեցի

2. Անձնանունների՝ թուրքերենի հնչողությամբ գրության կիրառում, որն ամենևին հարազատ չէ հայոց լեզվին

- Մեհմեդ — Մահմեդ
- Նազրմ բեյ — Նազիմ բեյ
- Ղասրմ բեկ — Ղասիմ բեկ
- Այդրն — Այդին
- Մյուլազրմ — Մուլազիմ
- Հայըրլը — Հայ(ը)րլի, Հայրլի, ինչպես՝ Չանդըրը – Չանկ(ը)րի, Չանկրի
- Սենեմ — Սանամ
- Մյութեսերիֆ — մութասարիֆ
- Հաքքը — Հաքի
- Հյուրիեթ — Հուրիեթ, «Հուրիեթ»
- Օտար անձնանուններում՝ Նոյել, Սայիդ, ավելորդ է «յ»-ն (Նոել, Սաիդ):

3. Ճիշտ ձևակերպումների հետ մեկտեղ հանդիպում են անթույլատրելի ձևակերպումներ

- Մինչ 1908թ. Երիտթուրքական սահմանադրությունն Արևմտյան Հայաստանում ազատագրական պայքարի նշանակալի դեպքեր չեն արձանագրվում (գիրք II, էջ 52):

- Թուրքիայում Ռուսաստանի դեսպան (ճիշտ ձև է), բայց՝ Մերսինի բրիտանական հյուպատոս (գիրք II, էջ 128): Ճիշտ տարբերակն է՝ Մերսինում Բրիտանիայի (Մեծ Բրիտանիայի) հյուպատոս:
- ավստրո-հունգարական դեսպանատուն (գիրք II, էջ 140) – Ավստրո-Հունգարիայի դեսպանատուն
- ամերիկյան միսիոներուի Մերի Գրաֆման (գիրք II, էջ 483) – ամերիկացի միսիոներուի
- գերմանական, իտալական, ֆրանսիական պատվիրակներ (գիրք II, էջ 141) – գերմանացի, իտալացի... և այլն:
- թուրքական պաշտոնյա Նուրյան (գիրք II, էջ 150)
- Կուրֆյուրստ եզրը երկու գրությամբ է ներկայացված, այն էլ մինևույն էջում «կուրֆյուրստ» և «կուրֆյուստ» (գիրք II, էջ 18)
- օսմանյան ներքին գործերի նախարար (գիրք II, էջ 56) – Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար
- վերնագրում՝ Ռուսաստանյան կայսրություն (էջ 5) – Ռուսական կայսրություն
- ռուսական կայսրություն (գիրք II, էջ 5) – Ռուսական կայսրություն
- Տվյալները հրատարակվեցին (էջ 156) – տվյալները հրապարակվեցին
- Կիլիկիայում մայրաթոռ ստեղծել (էջ 15)
- երիտթուրքերի հեղաշրջում (էջ 30) – երիտթուրքերի կատարած հեղաշրջում
- տեսակետից (էջ 105) – տեսանկյունից
- հայեցակետ (գիրք II, էջ 137) – հայեցակարգ
- դիտարկվել հետնախորքի վրա (էջ 15) – դիտարկվել է... խորապատկերին:
- Հայ ինքնապաշտպաններ (էջ 128)

- Օգտագործվել է՝ «Առաջին աշխարհամարտ» և «I աշխարհամարտ» (էջ 535)
- ...Ուստր-Մասաչուսեթս քաղաքներից: – ճիշտ տարբերակն է՝ Մասաչուսեթս նահանգի Ուստր քաղաքից (գիրք II, էջ 15)

4. «Ուր – որտեղ»-ի բազմաթիվ սխալ գործածություն

- Այն երկրամասը, ուր կար գարգացած արդյունաբերություն (գիրք II, էջ 27, 20, 56) (սա համատարած է): Պետք է լինի՝ այն երկրամասը, որտեղ...
- Գրեթե միշտ գործածվում է վաղուց «մոռացված-ուրացված» «գտնել» բայը:
- Դիմիտրովը գտնում է, որ... (գիրք II, էջ 38) – ըստ Դիմիտրովի՝ կամ Դիմիտրովի կարծիքով, ...
- Անց է կացվել վիճակագրություն (գիրք II, էջ 55) — անցկացվել է մարդահամար
- Դյորթյուցիներ (գիրք II, էջ 130) — դյորթյուցիներ
- զինակոչային (գիրք II, էջ 101) — զորակոչային (զորակոչ – զինակոչիկ)
- Լոոիում (գիրք II, էջ 4) – Լոոում (Լոոի – Լոոու – Լոոում, Գյումրի – Գյումրու – Գյումրում)
- «1912-1913 թթ. Բալկանյան առաջին պատերազմին» (գիրք II, էջ 35), իսկ 93-րդ էջում՝ «1912-13 թթ. բալկանյան պատերազմի ժամանակ»:

5. Ընկերությունների, միությունների, կոմիտեների ոչ ճիշտ գրություն. ավելորդ չափերտներ

- «Հայ գրողների ընկերությունը» (գիրք II, էջ 206)
- «Հայոց հրատարակչական ընկերությունը»
- «Թիֆլիսի հայուիյաց բարեգործական ընկերություն» (համատարած է)

- Երկրորդ գլխի ենթավերնագրերում ՀՅԴ-ն ներկայացված է «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» և «Հայ յեղափոխական դաշնակցություն» տարբերակներով (տե՛ս գիրք II, էջ 79 և 105):

6. Ուղղագրական սխալներ

- Բալկանյան պատերազմը գրված է և՛ փոքրատառով (գիրք II, էջ 93), և՛ մեծատառով (գիրք II, էջ 33)
- ողևիլ (գիրք II, էջ 190) — վողևիլ
- բուլղար (գիրք II, էջ 37) — բուլղարացի
- ետ քաշվել (գիրք II, էջ 30) — հետ քաշվել
- Հայաստանյաց (գիրք II, էջ 12) — Հայաստանյայց
- Շարլ (գիրք II, էջ 220) — Շառլ
- Արթեմիս Յանգո — Արտեմիս Յանկո
- «Քամելիազարդ տիկին» — «Կամելիազարդ տիկին»
- Մատթևոս Իզմիրյան (գիրք II, էջ 15) — Մատթեոս ...
- Երկրի գլխավոր օրենքի՝ Սահմանադրության գրությունը ամենուրեք փոքրատառով է (գիրք II, էջ 124, 52...)
- էջ 392 (գիրք II) – սխալ է գրված վրաց թագավոր Վախթանգ Գորգասալի անունը. Գրված է «Գորգասար»:
- Լ. Դևիս (գիրք II, էջ 485) — Դեվիս
- Զապել Եսայեանի ազգանունը նույն էջում գրված է երկու ձևով՝ «Եսայեան» և «Եսայան» (գիրք II, 130 էջ)
- սխալ է տրված հայ ճարտարապետության պատմության գիտակ Ժոզեֆ Ստրիզովսկու ազգանունը. այն գրված է Ստրիժովսկի (գիրք II, էջ 220 տե՛ս ՀՀՀ հ. 4, էջ 527):
- Էջ 509 (գիրք II) – Ֆրանսիացի ծովակալի անունը Դարտրինգ դյու Ֆուրնեի փոխարեն պետք է լինի Դարտիժ դյու Ֆուրնե (ֆր.՝ Dartige du Fournet):
- 511-րդ էջում (գիրք II) սխալ է գրված դանիացի հայտնի հայասեր Կարեն Եփփեի անունը:

- Մատթեոս Իգմիրլյանի անունը գրված է երկու ձևով՝ Մատթեոս և Մատթեոս (գիրք II, էջ 15 և 107):
- Երկու տարբերակով է ներկայացված «Ազատ բեմ» շաբաթաթերթի խմբագիր Լևոն Լարենցի իսկական ազգանունը՝ «Արսեն Քրիզյան» և «Քիրիշճյան» (գիրք II, էջ 73 և 94):
- 135-րդ և 137-րդ էջերում (գիրք II) «Իթթթիլաֆականներ» բառը գրված է երեք «թ»-ով՝ «իթթթիլաֆականներ»:
- Երկրորդ գրքի 150-րդ էջում Վարդան Մամիկոնյանի ու Մայր Հայաստանի նկարների արգելանքի մասին տեղեկությունը առաջին գրքում արդեն իսկ ներկայացվածի կրկնությունն է:
- Կնապ Кнап – անգլերենում «կ» տառը չի կարդացվում, ճիշտ տարբերակն է՝ Նապ:
- «Պյուրոսյան հաղթանակ» – Պյուրոսյան հաղթանակ (գիրք II, էջ 15)
- Մերսինի քրիտանական հյուպատոս Դաուլթի Ուիլի – ճիշտ տարբերակն է Մերսինում (Մեծ) Բրիտանիայի հյուպատոս Դոթի Ուիլի (գիրք II, էջ 128):
- Էջ 129 Կիլիկիայի Ջիհան կամ Ջեյհուն գետի անունը գրված է «Ջահան»:
- Դորթ-Յոլ Չորք Մարզվան, ճիշտ տարբերակն է Չորք Մարզվան կամ Չորք Մարզպան
- Սխալ է ներկայացված գինեգործ Վասիլ Թաիրովի ազգանունը. Թայիրով տարբերակը սխալ է
- Էջ 4 (գիրք II) – հատկանիշեր – հատկանիշներ
- Էջ 84 (գիրք II) – լեռնեցի – լեռնցի

7. «Թվական», «դար» բառերի կրճատման ոչ հաջող դեպքեր

- Մ. Ավետիսյանից հետո՝ 1897 թ., (գիրք II, էջ 65) — ... հետո՝ 1897 թվականին,

- Հայ ժողովուրդը թևակոխեց XX դ.: (գիրք II, էջ 206) — ... թևակոխեց XX դար (համատարած է)
- 1889 թվից ստեղծված (գիրք II, էջ 116) — 1889 թվականից ստեղծված
- 1890-ական թթ. (գիրք II, էջ 23) – 1890-ականներին (թթ.-ն ավելորդ է)
- Թատրոնը.... գիտակցվում է XIX դ. 50-60-ական թթ.: — ... XIX դ. 50-60-ականներին:

8. Կետադրական սխալները

- Սարգիս Պալյանն, աշխատելով (գիրք II, էջ 218) — ... Պալյանը, աշխատելով
- առաջին դերասանները. Միհրդատ Ամերիկյան... (գիրք II, էջ 232) – առաջին դերասանները՝ Միհրդատ Ամերիկյան...
- նրա կարծիքով — նրա կարծիքով,
- Ադանա հասնելուց առաջ՝ Մերսինում, — Ադանա հասնելուց առաջ Մերսինում
- Բանակցությունները պետք է սկսել որքան հնարավոր է շուտ – պետք է սկսել, որքան ...
- Ծնվել է Կ.Պոլսում՝ Օտյանների ազնվական գերդաստանում – Պոլսում, Օտյանների ազնվական գերդաստանում
- Բուն քաղաքը (որը կարիսցիները ...) էջ 217 (փակագծում «որը» ավելորդ է):

9. Խմբագրական վրիպումներ

- Առաջադիմեցին տնտեսության մի շարք ճյուղեր – գիրք II, էջ 3
- Իսկ Վարազի Ժառանգավորացի տեսչությունը – գիրք II, էջ 65
- օտարերկրյա մեծ ու փոքր տարբեր պաշտոնյաներ – գիրք II, էջ 131

- Անկախ պետականություն ստեղծած Մայր Հայրենիքում – գիրք II, էջ 133
- Հողված գրեց Ա. Համբարյանը Կիլիկիան աղետի տարելիցի առիթով – գիրք II, էջ 133
- «Թատրոն» բաժնում բոլոր դերասանների անունների կրճատ գրությունն է միայն՝ Հ. Զարիֆյան. Պ. Աղամյան, Հ. Աբելյան ... և այլն
- Երգահան Կոմիտասը (գիրք II, էջ 483) – կոմպոզիտոր
- **Նշանավոր երգահան Կոմիտասը բռնագաղթի ժամանակ ականատես լինելով ... – էջ 483**
- Բրիտանական կառավարության քաղաքականությունը ... բերեց ջարդերին ու կոտորածին – գիրք II, էջ 489 — Բրիտանական կառավարության քաղաքականությունը հանգեցրեց ջարդերի
- Միայլ է ներկայացված ամերիկյան “American Committee for Armenian and Syrian relief” կազմակերպության անունը. գրված է «Հայաստանի և Սիրիայի ամերիկյան նպաստամատույց կոմիտե», այնինչ ճիշտ տարբերակն է «Հայ-սիրիական նպաստամատույցի ամերիկյան կոմիտե» (գիրք II, էջ 542):
- «Համառուսաստանյան քաղաքների միություն» (Всероссийский союз городов – Քաղաքների համառուսաստանյան միություն (գիրք II, էջ 516):

ԱՄՓՈՓԻՉ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից 2010 և 2015 թվականներին կազմված «Հայոց պատմություն» բազմահատորյակի երրորդ հատորի առաջին և երկրորդ գրքերը հրատարակվել են թերի և ոչ պատշաճ գիտական մակարդակով: Վերջին տարիների գիտական նորույթի կիրառման, նոր աղբյուրների շրջանառության, պատմագիտության ու հասարակագիտության մեջ ընդունված նոր մեթոդաբանության օգտագործման փոխարեն հայ ժողովրդի պատմությունը ներկայացված է դեպքերի ու իրադարձությունների՝ շատ հաճախ ոչ փոխկապակցված հաջորդականության շարադրանքով՝ տեղ տալով նաև վտանգավոր ու անտեղի ձևակերպումների: Մարքսիստական մեթոդաբանության ու քաղաքական կուսակցությունների պատմությունը առանցքային դիտելով՝ հայ ժողովրդի պատմության մատուցումը կատարված աշխատանքը վերածել են հնամաշ ու քնություն չբռնող մեթոդաբանության հիման վրա պատրաստված հնամաշ մի խեղկատակության:

Հայ ժողովրդի պատմության ու ժառանգության կարևորագույն դրվագներն անտեսվել են, ներկայացված չեն հայության երկու հատվածներում տիրապետող գաղափարախոսական ուղենիշներն ու ընդհանուր ապրումները: Հատորներում առանձին բաժին չի հատկացվել հայ կնոջը, կանանց շարժմանը, քանի որ հեղինակները տուրք են տվել պատմությունը ներկայացնելու ավանդական մասկուլին, այն է՝ տղամարդակենտրոն ավանդական մոտեցմանը: Իսպառ բացակայում է հայկական սպորտի ու սկաուտական շարժման մասին որևէ

հիշատակում, այնինչ իր ժամանակին մեծ ծավալներ ու թափ ստացած և փոխկապակցված այս շարժումը հատկապես հայ երիտասարդության շրջանում արդիականացման գործընթացների մասին վկայող լավագույն ապացույցն էր:

Ինչ վերաբերում է գրքի ձևավորման գեղագիտական կողմին, ապա ստիպված ենք ասել, որ նման ցածր մակարդակի հատորների ձևավորումն ու տպագրությունը առավել կիրառական էր 1950–60–ականներին: Առանց շքակազմի, այնքան փոքր տառաչափով, որ անհնար է կարդալ, բազմաթիվ տեխնիկական ու սրբագրական սխալներով արված այս հատորներն առանց վարանելու պետք է հանել շրջանառությունից, խոտանել, իսկ դրանք այդ տեսքով տպագրության հանձնած պատասխանատուներից բացատրություն պահանջել:

Նյութի ոչ համաչափ մատուցման հետևանքով այս հատորի առաջին գիրքը վերածվել է ջավախքակենտրոն մի պատմության շարադրանքի: Երկրորդ հատորում նման անհամաչափությունը պայմանավորված է Հայ հեղափոխական դաշնակցության պատմությունը ընդարձակ ներկայացնելով: Դա ակնհայտ է դառնում նաև կամավորական շարժման ծավալային գերազանցությունը՝ Մեծ եղեռնի պատմության դրվագների հետ համեմատած:

Երրորդ հատորի խմբագրական կազմը ձեռնպահ է մնացել սփյուռքահայ հեղինակների աշխատանքները և դրանցում առկա գիտական նորույթը օգտագործելուց, ինչն իր հերթին կատարված աշխատանքը դարձնում է խոցելի և ոչ լիարժեք:

Քննարկման առարկա դիտելով բազմահատորյակի երրորդ հատորի առաջին և երկրորդ գրքերը, որտեղ ներկայացվում են հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի պատմության, այն է՝ ազգային-ազատագրական պայքարի, Մեծ եղեռնի պատմության դրվագները, հանգել ենք հետևյալ հիմնական եզրակացությունների.

- ա. Հայ ժողովրդի պատմության այս հատվածը ներկայացվել է հնացած ու քննություն չբռնող մեթոդաբանությամբ:
- բ. Գիտական տեքստերը պատրաստվել են գիտականության ու գիտության նորույթի տեսանկյունից բացարձակապես հնացած աղբյուրագիտական հենքի վրա:
- գ. Անհասկանալի պատճառներով հատորի հեղինակները ձեռնպահ են մնացել օտարալեզու և մեթոդական նոր մոտեցումներով հրապարակված աղբյուրները օգտագործելուց:
- դ. Անհարկի ու անտեղի ուռճացված են քաղաքական կուսակցությունների գործունեության, կամավորական շարժման դրվագները, որոնց նվիրված հատվածները գերակշռում են Մեծ եղեռնի պատմության կարևոր ու ճակատագրական դրվագներին:
- ե. Միջակ պատմագիտության ոգով շարադրված այս հատորներում առկա են նաև գրագողության, արտագրության փաստեր:
- զ. Հատորում կան բազմաթիվ ուղղագրական, կետադրական սխալներ և տեխնիկական վրիպակներ: Հաշվի առնելով միայն այս փաստերը և մի կողմ թողնելով հատորների գիտականության հարցը՝ ակնհայտ է, որ կատարված աշխատանքը խոտանված է:

Ապագա սերունդներին նման խեղաթյուրված ու աղճատ բովանդակությամբ ազգային պատմության ու հիշողության մատուցումը ոչ միայն մերժելի է, այլև վտանգավոր: Հետևաբար այս հարցը պետք է դիտարկել ազգային ու պետական անվտանգության համատեքստում:

Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի պատրաստման համար պատասխանատու անձինք և խմբագրակազմը ձախողել են չափազանց պատասխանատու այս

Նախագիծը հավուր պատշաճի իրագործելու իրենց պարտավորությունը, ուստի առաջարկում են առաջին իսկ հնարավորության դեպքում հանձնարարականներ տալ՝ այս հատորների շուրջ անաչառ ու չեզոք ակադեմիական քննարկումներ անցկացնելու և փորձագիտական եզրակացություններ ներկայացնելու համար:

Այսպիսի հատորի լույսընծայումը ոչ միայն հայագիտության մարզինալացման, այն է՝ միջակայնացման դրսևորում է, այլև բառի բուն իմաստով մեր ժողովրդի պատմության, հիշողության ու ժառանգության բացահայտ ու կատարյալ նսեմացում: Պատկան մարմինների և գիտական անաչառ շրջանակների հիմնական խնդիրը պետք է լինի այս աղետի շուտափույթ վերացումը, այլապես սերունդներին ենք հանձնում կատարյալ ֆիասկո կրած պատմագիտական մի փորձ, որի հետևանքները դժվար չէ կանխատեսել:

Ցավալին այն է, որ այս անգամ նման որակի հրատարակությամբ հենց մենք ենք բազմաթիվ առիթներ տալիս կեղծարարությունների ու հայկական կողմին նոր մեղադրանքներ ներկայացնելու, և այս երևույթը կոծկելը, դրա մեղավորներին պատասխանատվության չենթարկելը հավասարազոր կլինի նման գործելաոճի խրախուսմանը: Ցավոք, մեր օրերում պատմագիտության ոլորտի հին սերնդի հեռացումից հետո իր լիակատար տիրապետությունն է հաստատել պատմաբանների մի շրջանակ, ովքեր ոչ միայն պատասխանատվություն չեն կրում անցյալը ազատ ոճով և իմիջիայոց մատուցելու համար, այլև թայֆայականության ու կոռուպցիոն գործելաոճի հետևանքով հասարակագիտական ոլորտում ամրագրել են վաղուց քրոնիկական բնույթ ստացած համատարած մարզինալացումն ու լճացումը:

ՀԱՎԵԼՎԱԾ

Նախնական դիտարկումներ «Հայոց պատմություն» բազմահատորյակի IV հատորի առաջին գրքի վերաբերյալ

Ընդհանուր առմամբ ծանոթանալով «Հայոց պատմություն» բազմահատորյակի մի քանի հատորին՝ հանգում ենք այն եզրակացության, որ պատմություն գրելը ասես սպիտակ էջը սև տառերով լցնելու կարողության դրսևորում է: Այդպիսի տպավորություն է թողնում նաև բազմահատորյակի չորրորդ հատորի առաջին գիրքը, որն անդրադառնում է հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանին՝ քննության առնելով Հայաստանի առաջին հանրապետության, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի պատմության մինչ 1945 թվականն ընկած ժամանակահատվածը:

Խոստովանենք, որ հատկապես այս ժամանակաշրջանի պատմության վերանայումը՝ նորահայտ ու գաղտնազերծված պատմական վավերագրերի շրջանառմամբ, պետք է առավել համոզիչ դարձներ խմբագրակազմի ստանձնած պարտավորությունը հայ ժողովրդի պատմության նորովի շարադրման առումով: Ավսի, դա այդպես չէ. ընթերցողը կրկին բախվում է հնամաշ ձևակերպումների, իր դարն ապրած մեթոդաբանությամբ շարադրված և խնամքով գտված պատմական տեքստերի շարադրանքին:

Հատորում կրկին հանդիպում ենք «ադրբեջանցի» էթնանվանը, որը այս ժամանակաշրջանի համար որպես հավաքական միավոր անընդունելի է. օրինակ՝ «Ադրբեջանցիները հայտարարում էին... » (էջ 13):

Մեկ այլ տեղում կարդում ենք. «Եվ երբ մայիսի 27-ին մուսուլմանների ազգային խորհուրդը, հիմք ունենալով Անդրկովկաս ներխուժած ցեղակից Թուրքիայի անվերապահ աջակցությունն ու հովանավորությունը...» (էջ 15): Այստեղ պարզ է, որ «մուսուլման» ու «ցեղակից» եզրույթների օգտագործումը համարժեք չէ:

Առաջին հանրապետության զինանշանի մասին ներկայացված է հետևյալ պնդումը. «Հայ նկարիչների ջանքերով սրեղծվեցին Հայաստանի առաջին Հանրապետության դրոշը, զինանշանը, դրամանիշներն ու նամականիշները (ի դեպ՝ ոչ թե դրամանիշներ ու նամականիշներ, այլ դրամանիշեր և նամականիշեր): Ծիածանի երեք՝ կարմիր, կապույտ և ծիրանի գույներից կազմված դրոշի նախանկարն առաջարկել էր Մարտիրոս Սարյանը, զինանշանը նախագծել էին Հ. Կոջոյանը և Ա. Թամանյանը» (էջ 96, տե՛ս նաև պատկերագրողումների տախտակը): Հայտնի է, որ Մ. Սարյանն առաջարկել է ոչ թե ծիածանի երեք, այլ վեց գույներից բաղկացած դրոշի տարբերակ, որը չի ընդունվել: Եղել է նաև եռագույն տարբերակ, որի գունային երանգներն ու դասավորությունը չի համապատասխանում հետագայում ընդունված տարբերակին: Այդ առաջարկի նախնական օրինակը պահպանված է Հայաստանի ազգային արխիվում:

Սխալ է ներկայացված Հայաստանի առաջին հանրապետության զինանշանը: Նման գուներանգներով զինանշանի փոխարեն Առաջին հանրապետության կառավարության կողմից պաշտոնապես առաջարկվել է այլ տարբերակ, որը հիմնականում համապատասխանում է Հայաստանի երրորդ հանրապետության զինանշանին: Որպես ՀՀ թղթադրամ ներկայացված է միայն 250 ուրվին, որը նույնպես սխալ է, քանի որ լոնդոնյան թողարկման մեջ կային նաև 50 և 100-ուրվիանոց թղթադրամներ:

89-րդ և 98-րդ էջերում կրկնվում է Հայաստանում սկաուտական շարժումը կազմակերպելու նպատակով Երևան ժամանած Վահան Չերազի, Օնիկ Յազմաճյանի և Տիգրան Խոյանի մասին տեղեկությունը:

99-րդ էջում հիշատակվող՝ Հայաստանը ՄՕԿ-ի անդամ դառնալու հավանականության և դրա շուրջ ծավալված քննարկումներին վերաբերող տեղեկությունը որևէ հղմամբ հիմնավորված չէ այս գրքում:

128-րդ էջում օգտագործված «հայահպատակ» բառը ոչ միայն անտեղի է, այլև անհեթեթ:

168-րդ էջում գրված է «Զորակազմը բաղկացած էր 16 գումարտակից (յուրաքանչյուրում 400-500 մարդ) և շուրջ 20 զինվորից» (առանց մեկնաբանության...):

212-րդ էջում թուրք հեղինակ Պարլարի աշխատանքից մեջբերվում է պարբերություն՝ առանց հղման:

234-րդ էջում «պատուհասում» բառը ճիշտ օգտագործված չէ:

Էջ 236 – Տարածված տեսակետի համաձայն՝ Էնվերի սպանությունը կապվում է Հակոբ Մելքունովի անվան հետ, ինչն ավելի շուտ առասպելաբանություն է: Այստեղ գերակշռում է այն ցանկությունը, որ Էնվերի անունը նույնպես հայտնվի հայ վրիժառուների գնդակներից սպանված Թալեաթի, Բեհաեդդին Շաքիրի, Ջեմալ փաշայի և այլոց անունների շարքում: Իրականում Էնվերն սպանվել է Միջին Ասիայում, բասմաչական հեծյալ գրոհի ժամանակ, կարմիրբանակայինների գնդացրային կրակահերթից: Բացի այդ Էնվերի սպանության այս վարկածը միակը չէ: Վերջնական հաստատում չստացած տեղեկության հրապարակումը ակադեմիական բազմահատորյակում անընդունելի է:

Նույն՝ «հարմարեցնելու» հոգեբանության դրսևորումն է նաև դոկտոր Նազիմին քեմալականների կողմից կախաղան

բարձրացնելու փաստի մեկնաբանությունը: Այստեղ պատճառներն ու հանգամանքները բոլորովին այլ էին (էջ 236):

377-րդ էջում գրված է. «Այսպիսով՝ *խորհրդային իշխանության ջանքերով Պարսկաստանում հանգրվանած փարագիրների ճշող մեծամասնությունը մինչև 1921 թ. սեպտեմբերը վերադարձավ Հայաստան: Երանց մեջ էին շատ մտավորականներ: Ինչ վերաբերում է ՀՅԴ ղեկավարներին, ապա նրանց վերադարձի մասին խոսք լինել չի կարող: Երանք բոլորը մեկնեցին Եվրոպա, Ամերիկա՝ շարունակելով մնալ հակախորհրդային դիրքերում: Լուծարվեց նաև Ս. Վրացյանի «կառավարությունը»: Վերացավ Հայաստանի սահմանների մոտ գոյություն ունեցող հակախորհրդային պայքարի կենտրոնը»: Այս տողերը կարդալիս, այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե դրա հեղինակը տեղյակ չէ, որ Խորհրդային Միությունն արդեն քսանհինգ տարի է՝ գոյություն չունի:*

515-րդ էջում կարդում ենք. «Ե. Չարենցի հիվանդ ու փկար մարմինը անկարող էր դիմանալ բանտային պայմաններին: Ես փանջամահ եղավ և իր մահկանացուն կնքեց 1937 թ. նոյեմբերի 29-ին Երևանի բանտում»: Այս տողերից այդպես էլ չի հասկացվում, թե մեծանուն բանաստեղծը բանտում սպանվել է, թե մահացել:

Նույն մշուշապատ տեղեկությունն է տրված նաև Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանի պարագայում. «1938 թ. ապրիլին մահացավ Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանը: Կան որոշ վկայություններ կաթողիկոսի մահվան մեջ կողմնակի միջամտության մասին, որի իսկությունը, սակայն, դժվար է վստահաբար պնդել» (էջ 527):

Էջ 526 – «... Երևանում քանդման ենթարկվեց նշանավոր Պողոս-Պետրոս եկեղեցին»:

Այս հատորում ամենամեծ ու աղաղակող թերությունը թերևս սովետա-ֆիննական և Հայրենական պատերազմները

խայտառակ ներկայացնելն է: Ստացվում է, որ Սովետական Միությունը ուղղակի և անուղղակի չի դաշնակցել ֆաշիստական Գերմանիայի հետ, Մերձբալթիկայի, Ֆինլանդիայի ու Լեհաստանի դեմ չի վարել ագրեսիվ զավթողական քաղաքականություն: Տեքստում աղաղակող հակասություն կա. մի կողմից հիշատակվում է 1939 թ. օգոստոսի 23-ին Մոսկվայում ԽՍՀՄ-ի ու Գերմանիայի միջև կնքված չհարձակման պայմանագրի և դրան կից Գաղտնի արձանագրության մասին, չի տրվում դրա գնահատականը՝ որպես Գերմանիայի ձեռքերը փաստացի ազատելու և Երկրորդ աշխարհամարտի սանձազերծմանը նպաստող փաստաթուղթ: Ավելին, Բեսարաբիայի, Ֆինլանդիայի, ինչպես նաև մերձբալթյան հանրապետությունների խորհրդային բռնազավթումը հորջորջվում է «սահմանների ամրապնդման ուղիներ» կամ «սահմանների անվտանգության ուժեղացում» (տե՛ս համապատասխան գլուխը):

Հայրենական պատերազմին հայ ժողովրդի մասնակցությունը ներկայացնող տեքստն ասես խորհրդային պաշտոնական պատմագրության կողմից գտված ու միօրինակության բերված հնամաշ ու իրականությունը կոծկող մի շարադրանք վրնի: Որևէ քննադատություն չկա խորհրդային ռազմաքաղաքական դեկավարության անտաղանդ ու անգրագետ պահվածքի և դրա հետևանքով պատերազմի առաջին ամիսներին կրած մարդկային ու նյութական ահռելի կորուստների մասին: Առնվազն ձանձրույթ առաջացնող ու միապաղաղ անունների ու պարզևների թվարկման փոխարեն ճակատագրական այս պատերազմի դրվագներին անդրադառնալիս պետք է ներկայացվեին թիկունքը՝ իր առօրյայով ու պայքարով, զինվորագրելու և զորահավաքի խորհրդային քաղաքականությունը, հրամանատարության թույլ տված ճակատագրական սխալների հետևանքով չարդարացված կորուստները, հայ զինվորի պատերազմական կյանքն ու նամակագրության միջոցով ներ-

կայացված մասնավոր պատմություններ: Ոչ մի տեղ ներկայացված չէ Թամանի գործողության ընթացքում սխալ ավիանման հետևանքով ունեցած բազմահազար կորուստների փաստը:

Գրքում անորակ է ներկայացված Խորհրդային Հայաստանի զինանշանը, իսկ դրոշի երիզներն անհամաչափ են: Որպես Խորհրդային Հայաստանի թղթադրամ է ներկայացված «25000 ռուբլի» նմուշը, ինչը տպավորություն է ստեղծում, թե միայն անվանական այդ արժեքով թղթադրամն է եղել շրջանառության մեջ:

Էջ 571 – «Ամերիկյան ռազմաօդային ուժերի խիզախ օդաչուներից էին Չարլզ Տերրերյանը, Քրրոք Քրրքորյանը (այժմ ՀՀ Ազգային հերոս)»:

Էջ 629 – ԱՄՆ Օրեգոն նահանգը ներկայացված է որպես Օրեհոն:

Էջ 654 – «1927 թ. Ֆ. Նանսենը հանդես եկավ «Խաբված ժողովուրդ» գրքով, որտեղ դատապարտեց մեծ տերությունների տնտեսական և խարդախ վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ»: Իրականում 1927 թվականին Ֆ. Նանսենի վերոնշյալ գիրքը լույս է տեսել «Հայաստանով» կամ «Հայաստանի միջով» վերնագրով, որը նորվեգերեն տարբերակն է (Fridtjof Nansen, *Gjennem Armenia*, Oslo: Jacob Dybwads Forlag, 1927): Մինչդեռ «Խաբված ժողովուրդ» է վերնագրված եղել սույն գրքի՝ 1928 թվականին հրատարակված գերմաներեն տարբերակը (Fridtjof Nansen, *Betrogenes Volk: Eine Studienreise durch Georgien und Armenien als Oberkommissar des Völkerbundes*, Leipzig: F.A. Brochhaus 1928):

Տպաքանակը՝ 200 օրինակ
Տպագրվել է «Կոլլաժ» տպագրատանը
Երևան, Աարյան 4: Հեռ.՝ (+374 10) 520217
Էլ. փոստ՝ collageltd@gmail.com
www.collage.am

L 600 77]

ԳԱՆ ԴԻՃՆԱՐԱՐ ԳԻՏ. ԳՐԱԿ.



FL0645077

11
A 107011